

Գուլժ



(1912-2003)

Ուրբաթ, ապրիլի 25-ի գիշերը հոգին ավանդեց մեր ազնիվ եւ չարքաշ հայրը՝ լուսահոգի Բարթեղ Բաղդասարյանը, ուստի հարկ եմ համարում, առ ի հարգանք նրա անմոռաց հիշատակին որդիաբար ձոնել հետեւյալ երկու բանաստեղծությունները, ապա հայ գրականությունից մի կանգի կտորներ:

Հորս

Չոն հորս՝

Բարթեղ Բաղդասարյանի անմահ հիշատակին

Էր. Բաղդասարյան

Հայոց լեռների
ժայռերի նման
դու ամուր էիր
հայր իմ անգին՝ պատվական.

Դեռ հագիվ քայլող մի մանուկ
քեզ տարին արտ-անդաստան-ագարակ,
կիզիչ արեւի շողերի տակ
քրտինք տափեցիր
ամբողջ մի դար, ամբողջ մի կյանք,
օտար ամայի ափերի վրա,
եւ դու կերտեցիր
հսկա ու խոնարհ՝ ազնվական
մի մոծ հայկական գերդաստան
հայեցի վարքով,
հայեցի բարքով.

Ազնիվ էր սիրտդ
հոգիդ էր օհնջ, անաղարտ.
վստահ եմ հիմա
լուսավոր հոգիդ
հանգիստ է ննջել
եւ ինչպես ես
երագում տեսա
մորս հոգուն՝ մեն-մենակ
քեզ սպասող, անմոռաց սիրով
քեզ սպասող տարի-տասնյակ
միացար դու հավերժ՝ հավիտյան:

Լալկան ուռենին

Չոն հորս՝

Բարթեղ Բաղդասարյանի անմահ հիշատակին

Նրան, որ իր սիրասուն կնոջ մահվանից հետո ամբողջ մի տասնյակ տարիներ արտասուք թափեց մինչեւ միացավ նրա հոգուն եւ ննջեց նրա շիրմի կողք-կողքին

Էր. Բաղդասարյան

Հերու հեռավոր ծայրամասերում
սառույց ծովեր
սպիտակ դաշտեր
որտեղ սառել եմ
սրտերը բոլոր
ջերմություն տենչող
փոքր հյուղակում
լսվում էր տրոփյուն
ցավոտ սրտերի,

իսկ համառորեն
գարնան սպասում,
էլի ծաղկեին
ծառ, ծաղիկ ու դաշտ
իսկ ովկիաններից շատ հեռու՝ այն կողմ
հեռու հեռավոր արեւի գրկում
հինավուրց հայոց մեղեդին
թախծ երգը շուրթերին
Լալկան ուռենին
մայրական սիրով
հոր կարոտով
տուն էր կանչում
հեզ պանդուխտներին.

Ա՛վաղ չեկավ գարունը
կարոտ կանչերին
ոչ մի արծազանք
ու հանգավ կարոտից
թախծոտ երգը շուրթերին
Լալկան ուռենին:

Հորս

Արշակ Չոպանյան

Ստեփս մեզ միշտ դեմքդ ազնվագեղ ու խաղաղ,
Ո՛վ հայր, կապի իր վեհությամբ միամիտ.
Քաղցրահայաց խոհուն աչքերդ, միշտ մատաղ
Բոցով մը վառ, մազերուդ տակ մոխրախիտ
Ու խոնջ կնճռոտ ճակտիդ տակ լայն, քեզ հակած
Կտեսնեմ դեռ դազկահիդ վրա սիրեկան,
Ստեղծագործ մատներդ տարփմամբ զբաղած
Հոգի ու կյանք տալու նյութին անկենդան.
Արծաթն, ոսկին բիրտ և ակունքները անտաշ
Կամբիդ շունչին տակ հղկված, ձևափող,
Ընդելուզված կդառնային գեղահրաշ
Նուրբ էակներ՝ կանանց շնորհն հավելող:
Քե՛զ կպարտիմ, հա՛յր, արևոտ արյունիդ
Եվ քու սիրուն օրինակիդ, ինչ որ ցարդ
Ծիգերս ընել հաջողեցան, քու վճիտ
Կյանքդ ինձ ուսուց սիրել սիրով խանդակաթ
Գեղեցկությունը Բարիին և անգին
Բարությունը Գեղեցկության: Ո՛վ տե՛ս, հա՛յր,
Ես զգացմանց ու խորհելու մետաղին
Ո՛ր բառերու ակունքներուն վրա պայծառ
Կկրկնեմ քո՛ւ գործդ ուժերովս իմ խոնարհ:

ԵՍ ԿՈՒՋԵԻ

Ավետիք Իսահակյան

Ես կուզեի արևավառ
Անապատը ամայի,-
Ուր մեն-մենակ և վըշտահար
Թափառեի ու լայի:

Աշխարհից դուրս ու սրտաբաց-
Անապատում ամայի
Տաք ժայռերը ամուր գրկած՝
Համբուրեի ու լայի...

ԳՆԱ , ԲԼԲՈՒԼ

Գուսան Շերամ

Գնա՛, բլբուլ, թռիր գնա
Ես արյունոտ աշխարհեն,
Թռի՛ր, բլբուլ, էլ մի՛ կենա ...
Բաժանեցին քեզ վարդեն:

Քո սիրեկան սիրուն վարդդ
Քամին փչեց չորացուց,
Արնով լցրած վարդարանդ,
Այգիներդ փչացուց:

Արդեն եղավ ազոավի տեղ,
Էստեղ էլ վարդ չի բացվի,
Չուր մի՛ ողբա, խղճուկ բլբուլ,
Ցավերդ առ հեռացիր:
1906

Մայիսը Հայ ժողովրդի

պատմության մեջ

1 մայիս

1467 Ջիանշահը վճռական ճակատամարտի է ելնում Աղ-կոյունլուների դեմ և զոհվում է 70-ամյա հասակում:

1843 Վենետիկում Մխիթարյանները հրատարակում են «Բազմավեպ» ամսագիրը, որը գոյատևում է մինչև օրս:

1868 Լույս է տեսնում Էջմիածնի Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Արարատ»-ի առաջին համարը:

2 մայիս

1219 Մահացավ Լևոն Բ. հայոց մեծարքայ թագավորը:

3 մայիս

1998 Ալեքսանդրիա քաղաքի (Եգիպտոս) գերեզմանատանը տեղի ունեցավ Սերբեր Աղբյուրի կողակից և ազգային հերոսուհի Սոսե Մայրիկի (Սոսե Վարդանյան) աճյունները Երևան տեղափոխելու արարողությունը:

4 մայիս

1913 Երևանում բացվեց հեռախոսային ցանցը:

5 մայիս

1877 Ռուսական զորքերը զորավար Լոռիս-Մելիքովի հրամանատարությամբ գրավեցին Արդահանը:

7 մայիս

951 Ծնվեց հայ բանաստեղծ, փիլիսոփա, երաժիշտ Գրիգոր Նարեկացին: (Վախճ. 1003թ.-ին):

1866 Կ. Պոլսի Գուլե-գափու թաղամասում հիմնադրվեց ֆրանկոմասոնական «Սեր» գաղտնի ընկերությունը, որի անդամներն էին Ս. Մամուրյանը, Յ. Մվաճյանը, Ս. Թագ վորյանը:

8 մայիս

1930 Խորհրդային ոստիկանության կողմից սպանվեց Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ V-ը (Մուրեմյանց):

9 մայիս

1945 1941-1945 թվականների Հայրենական մեծ պատերազմում խորհրդային ժողովրդի տարած հաղթանակի օրը:

1992 Արթրեջանական 71-ամյա գերությունից ազատագրվեց Շուշին:

10 մայիս

1943 Մեծի Տանն Կիլիկիո Անթիլիասի Մայր Տաճարում օծվեց Գարեգին Ա կաթողիկոսը (Հովսեփյանց):

11 մայիս

330 Կոստանդինոս Ա Մեծ կայսրն իր մայրաքաղաքը Հռոմից տեղափոխեց Բյուզանդիոն, որը նրա պատվին վերանվանվեց Կոստանդնուպոլիս:

12 մայիս

1994 Արթրեջանի և ԼՂՀ-ի պաշտպանության նախարարների կողմից ստորագրվեց արցախյան ռազմաճակատում զինադադարի համաձայնագիրը:

14 մայիս

1632 Մահացավ 17-րդ դարի հայ վերածննդի ռահվիրա Մովսես Տաթևացի կաթողիկոսը: (Ծնվ. 1583 թ.):

1805 Քյուրակ-չայ գետի ափին կնքվում է պայմանագիր, որի համաձայն Ղարաբաղը միացվում է Ռուսաստանին:

15 մայիս

1916 Մահացավ հայրուկապետ և ժողովրդական հերոս Քեռիմ(Արշակ Գավաճյան):

17 մայիս

1827 Հայկական կամավորական առաջին գումարտակը Թիֆլիսից մեկնում է մարտադաշտ:

18 մայիս

1843 Ծնվեց ամենայն հայոց կաթողիկոս Ներսես Եպիսկոպոս Աշտարակեցին: (Վախճ. 1857թ.-ին):

19 մայիս

325 Նիկիա քաղաքում հրավիրվեց առաջին տիեզերական ժողովը, որտեղ ընդունվեց «Նիկիական հանգանակը»:

1915 Վանի 1-ամյա ինքնապաշտպանության հաղթական ավարտը:

20 մայիս

1963 Մոսկվայում ավարտվում է աշխարհի շախմատի չեմպիոնի կոչման համար Բոտվիննիկ-Պետրոսյան մատչը՝ Տ. Պետրոսյանի հաղթանակով:

22 մայիս

1918 Սարգարապատի չորս օրյա հերոսամարտը:

1924 Ծնվեց հայագագ ի ֆրանսիացի երգիչ, կոմպոզիտոր Շառլ Ազնավուրը (Վաղինակ Ազնավուրյան):

23 մայիս

1960 Մահացավ ազգային հերոս Սողոմոն Թեհլիրյանը: (Ծնվ. ապրիլի 2-ին 1896 թ.):

24 մայիս

1915 Դաշնակից պետությունները Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը, միասին հուշագիր հղեցին, առաջին անգամ մեկ այլ կառավարությանը մեղադրելով «մարդկության դեմ հանցանք գործելու» համար: Այս միացյալ հուշագրում նշված է: «Դաշնակից պետությունները հրապարակայնորեն հայտարարում են Բարձրագույն Դիվանին, որ Թուրքիայի կողմից մարդկության և քաղաքակրթության դեմ կատարված այս նոր հանցանքների համար Օսմանյան կայսրության բոլոր անդամները, ինչպես նաև այն գործակալները, ովքեր

ներգրավված են եղել այդ հանցանքների մեջ, անձնապես պետք է պատասխան տան կատարած հանցագործությունների համար»:

25 մայիս

1441 Էջմիածնում տեղի ունեցավ պատմական ժողով, որին մասնակցեց հայ եպիսկոպոսների և վարդապետների մեծ մասը: Ժողովը կաթողիկոսությունը Վաղարշապատում վերականգնելու որոշում ընդունեց: Այդ ժամանակից Ամենայն հայոց կաթողիկոսի նստավայրն անփոփոխ գտնվում է Էջմիածնում:

1918 Ղարաբեիլիսայի հերոսամարտը: (Տևեց մինչև մայիսի 28-ը):

1968 Տեղի ունեցավ Սարգարապատի ճակատամարտին նվիրված հուշարձանի հանդիսավոր բացումը:

26 մայիս

451 Ավարայրի ճակատամարտը՝ Վարդանանց հերոսամարտը: Քիստոնեական հավատքի համար Չրաղաշտական պարսիկների դեմ մղվող պայքարում վախճանվեց Վարդան Մամիկոնյանը:

1907 Սուլուխի կռվում զոհվեց հայ ազատագրական շարժման գործիչ Գևորգ Զաուրը:

1918 Ցրվում է անդրկովկասյան սեյմը: Վրաստանը, Ադրբեջանը և Հայաստանը հայտարարվում են անկախ հանրապետություններ: (Մինչև մայիսի 28-ը):

27 մայիս

1661 Ծնվեց միջնադարյան հայ բանաստեղծ, աշուղ Նաղաշ Հովնաթանը: (Վախճ. 1722թ.-ին):

28 մայիս

1918 Հայկական ուժերի կողմից թուրքական բանակի պարտությունից հետո Հայաստանը հայտարարվեց անկախ (առաջին հանրապետության օր):

2000 Ջորավար Դրաստամարտ Կանյանի (Դրո) աճյունը Բոստոն քաղաքից Հայաստան տեղափոխվեց, այն անփոփվեց Ապարանի հուշահամալիրում:

29 մայիս

1453 Թուրքերը գրավում են Կ. Պոլիսը:

30 մայիս

1913 Ավարտվեց Բալկանյան առաջին պատերազմը, որին մասնակցեց Անդրանիկի զլխավորած հայկական ջոկատը:

Լուրեր

Իրանահայ համայնք

- Մեծ Եղեռնի 88-ԱՄՅԱԿԻՆ ԼԿԻՐՎԱԾ ՀԱՐԱՆՔԻ ԵՒ ԲՈՂՈՔԻ ԹԵՅՐԱՆՈՒՄ



Ապրիլի 24, բեմի վրա Չախից աջ Իրանում Հայաստանի Հանրապետության դեսպանորդ եւ լիազոր նախարար Գրիգոր Առաքելյան, Հայ համայնքի հոգեւոր հայրեր:

Ապրիլի 24, ծաղիկների մատուցում Իրանում Հայաստանի Հանրապետության դեսպանորդ եւ լիազոր նախարար Գրիգոր Առաքելյան, դեսպանատան խորհրդակցականներ՝ եղվարդ Դումաշյան, եւ Հասմիկ Դաշտոյան:

- Մեծ Եղեռնի 88-ամեակի ոգեկոչման հանդիսություններ Նոր Ջուղայում

Սբ. Ամենափրկիչ վանքում ապրիլի 23-ի երեկոյան կատարվեց հոգեհանգստյան արարողություն մասնակցությամբ թեմի առաջնորդ Տ. Շահան ծ. վրդ. Սարգսյանի, թեմի քահանայից դասի եւ Սբ. Ա. վանքի «Կոմիտաս» երգչախմբի: Այնուհետեւ արարողությունը շարունակվեց Ապրիլյան Մեծ Եղեռնի նահատակների հիշատակը ոգեկոչող հուշարձանի առջեւ եւ ավարտվեց հոգեհանգստյան արարողությամբ:



Իրան

- **Իրանի շինանյութի ու քաղաքաշինության առաջին ցուցահանդեսը երեսնուամյակում**

Իրանի շինարարական ու քաղաքաշինական սարքերի ու շինանյութի առաջին մասնավոր ցուցահանդեսը Հայաստանում կայանալու է Երևանի քաղաքապետարանի եւ Իրան-Հայաստան առևտրական պալատի համագործակցությամբ: Ցուցահանդեսի գործադիր տնօրեն Մեհրի Փոշթբուհին ասել է, որ սույն ցուցահանդեսը կայանալու է հունիսի 14-ից 20-ը (խորդադի: 23-30) 1500 ք. մ. տարածք ունեցող մի վայրում Երևանում:

- **ԻՐԱՆԸ ՊԱՏՐԱՍ Է ՄԻՋՆԱՐԴՈՒ ԹՅԱՆ**

ԵՐԵՎԱՆ, 29 ԱՊՐԻԼ, ԱՐՄԵՆՊՐԵՍ:
Մեկօրյա պաշտոնական այցով Երևան ժամանեց Իրանի Իսլամական Հանրապետության արտգործնախարար Քամալ Խարազիի գլխավորած պատվիրակությունը, որի



տարածաշրջան հետաձգվել էր Իրանի շուրջ ստեղծված իրավիճակի պատճառով: «Արմենիա» միջազգային օդանավակայանում լրագրողների հետ ճեպագրույցի ժամանակ Իրանի ԱԳ նախարար վերահաստատեց երեկ Բաքվում արտահայտած իր այն մտտեցումը, որ Թեհրանը պատրաստ է միջնորդի դեր ստանձնել յուրաքանչյուր հակամարտության կարգավորման գործում: Ք. Խարազիի խոսքերով, Հայաստանի ղեկավարների հետ հանդիպումներում քննարկվելու է երկկողմ հետաքրքրություններ կայացնող ծրագրերի ընդլայնման հարցը: Միաժամանակ նա ընդգծեց, որ հիմնականում անդրադարձ է կատարվելու Կովկասի անվտանգության խնդրին: «Մենք կարծում ենք, որ Կովկասի խաղաղության պատասխանատուները հենց տարածաշրջանի երկրներն են: Ադրբեջանի եւ Վրաստանի պաշտոնատար անձանց հետ անցկացրել ենք խորհրդակցություններ, բնականաբար նաեւ Հայաստանում կրճատվեցին տարածաշրջանի անվտանգության բարձրագույն հնարավորությունը», ասաց Իրանի արտգործնախարարը: Հատկանշական է, որ Իրանցի ղիվանագետը, երեկ Բաքվում անդրադառնալով տարածաշրջանի երկրների հետ ԱՄՆ-ի հարաբերություններին, նշել էր, որ դրանց զարգացման գործում խնդիրներ չեն ծագի, եթե փոխգործակցությունը չնշանակի միջամտություն հարավկովկասյան պետությունների ներքին գործերին, այլ ծավալվի կողմերի հավասարության եւ փոխադարձ շահերը հաշվի առնելու հիմունքով:

- **Իրանն ու Ռուսաստանը քննարկել են Կասպիականի հարցերը**

Ռուսաստանի Դաշնության մոտ Իրանի դեսպան Ղոյանձեզա Շաֆեին եւ Կասպիականի խնդիրներով Ռուսաստանի Հանր. նախագահի մասնավոր ներկայացուցիչ Վիկտոր Կալուժսինը քննարկել են Կասպիականի իրավիճակը: Մոսկվայից ԻՐԱՆ-ի արտգործն. համաձայն հանդիպման ընթացքում կողմերը մտքերի փոխանակում են կատարել Կասպիականին առնչվող տարբեր համաձայնագրերի առաջարկման անհրաժեշտության:

Հայաստան

- **ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՊՐԻԼԷՍԱՆՉՈՐՄՅԱՆ ՈՒՂԵՐԶ**

Սիրելի հայրենակիցներ,
Այսօր Ցեղասպանության զոհերի հիշատակի օրը, որը հայությունը եւ մեր ժողովրդի բարեկամները գլուխ են խոնարհում անմեղ զոհերի հիշատակի առջև: 20-րդ դարասկզբին Օսմանյան կայսրությունում ծրագրվեց եւ իրականացվեց մի ոճրագործություն, որի զուգահեռը դժվար է գտնել պատմության մեջ: Այն եղավ ծանրագույն ողբերգություն ոչ միայն ցեղասպանությունը վերաբրողների, այլեւ հայ ժողովրդի բոլոր հատվածների համար: Ընդգրկելով Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման խնդիրը Հայաստանի արտաքին քաղաքականության օրակարգում մենք արտահայտում ենք



ժողովրդի բոլոր հատվածների համար: Ընդգրկելով Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման խնդիրը Հայաստանի արտաքին քաղաքականության օրակարգում մենք արտահայտում ենք

հայության արդարացի սպասելիքները: Մենք ելունու ենք այն հանգումներից, որ մարդկության դեմ կատարված հանցագործությունը պետք է ճանաչվի եւ դատապարտվի ողջ մարդկության, այդ թվում եւ Թուրքիայի հասարակության, կողմից:
Միջազգային հանրության հստակ եւ ամբողջական զենհատականը կարելու է ոչ միայն պատմական արդարությունը վերականգնելու առումով: Միջազգային ասպարեզում Հայաստանի գործադրած քանքերը պայմանավորված են բոլոր հարեւանների հետ բնականոն հարաբերություններ ունենալու մեր անկեղծ ձգտմամբ: Հայաստանի, Արցախի եւ սփյուռքի սիրելի հայրենակիցներ, Պետությունը արտահայտիչն է իր ժողովրդի ակնկալիքների եւ նպատակների: Մենք շարունակելու ենք պշխատել նշված ուղղություններով ապավինելով ազգային միասնության ամխորտակ ուժին: Ոգեկոչելով նախապակների հիշատակը մենք վերահաստատում ենք մեր վճռականությունը կերտելու ամուր պետականություն, ազատ ու քաղաքակիրթ հասարակություն, որտեղ բարձրագույն արժեքը մարդն է:

- **ՆՈՐ ՀՎԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՑԵՂԱՄԱՆՈՅԱՆ ՃՆԱՆԱՄԱՆ ՄԻՋՑՈՎ**

ԱՐԱ ԱՐԱՂԱՄՅԱՆ, Ռուսաստանի Հայերի միության նախագահ ԻՆՃ ենք մենք նշում այսօր
24 ապրիլի 1915-23 թթ. թուրքական կառավարության կատարած Ցեղասպանության զոհերի հիշատակի օր: Թուրքական իշխանության ներքո գտնվող Արեւմտյան Հայաստանի ողջ հայ բնակչությունը, որը հազարավոր տարիներ բնակվում էր այնտեղ, անխնա ոչնչացվեց: Ոճրագործությունն ուներ քաղաքական նպատակ՝ հայ էթնիկական խմբի վերացում, որը խոչընդոտ էր պանթուրքական ծրագրի իրականացման համար, որի նպատակն էր Կովկասի, Միջին Ասիայի, Հյուսիսային Իրանի թուրքերի միավորումը թուրքական կառավարության ներքո ընդհուպ Սինցաուն: Այս ծրագիրը ուղղված էր նաեւ Ռուսաստանի դեմ: Սա պատմության մեջ հայտնի առաջին մեծածավալ ցեղասպանությունն էր: Հենց ցեղասպանություն տերմինը միջազգային շրջանակներում գործածվում է ՄԱԿի կոնվենցիայում, որը հունակատիմական թարգմանությամբ նշանակում է ողջ ժողովրդի սպանություն:

1915 թ. մայիսի 24-ին երեք մեծ տերություններ՝ Ռուսաստանը, Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան հանդես եկան դեկլարացիայով, որտեղ թուրքական կառավարության գործունեությունը որակեցին որպես միջազգային իրավունքով դատապարտված հանցագործություն իրականացված ողջ մարդկության դեմ: Փարիզի խաղաղության կոնֆերանսում միջազգային հանրությունը ցեղասպանության կազմակերպիչներին եւ իրագործողներին համարեց քրեական պատասխանատու, իսկ թուրքական կառավարությանը՝ քաղաքական պատասխանատու, եւ որպես արդարացի փոխհատուցում կոչ արեց Արեւմտյան Հայաստանի ցատազրույնն ու Հայաստանի հետ նրա վերամիավորումը ճանաչելով Հայաստանը որպես միջազգային իրավական սուբյեկտ, իսկ տարածքային ստատուսը համաձայն ԱՄՆ նախագահ Կուդրո Կլիվոնի պրեիտրաժային որոշման: Դրանից է բխում նաեւ Ազգերի լիգայի կարծիքը, որը դատապարտում է Հայաստանի դեմ Թուրքիայի իրագործած ագրեսիան:

Թուրք ազգայնականները, օգտվելով արեւմտյան տերություններից ունեցող համաշխարհային ճգնաժամներից եւ Ռուսաստանի բոլշեւիկյան կառավարության թողությունից, կարողացան խափանել Հայկական հարցի կարգավորումը Հյուսիսային խաղաղասիրական պայմանագրի միջոցով:

Ոճրագործությունը մնաց անպատիժ: Հայերի ցեղասպանությունն անպատիժ թողնելն ունեցավ իր հետեւանքներն, այդ թվում հրեաների ողջակիզումն իրագործված գերմանացի ազգայնականների կողմից: Այս վերաբերմունքը պատահական չէր: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Գերմանիան, որպես Թուրքիայի դաշնակից, պատասխանատվություն էր կրում հայերի ցեղասպանության համար: Ինչպես վկայում են փաստաթղթերը, գերմանական զինվորական հրամանատարներն ու ղիվանագետները տեղյակ էին իրականացվող ոճրագործությունից հայերի բնաջնջման ողջ ծրագրից: Այս հանցագործությունը գրավեց Հիտլերի ուշադրությունը ոչ միայն որպես նպատակին հասնելու ճանապարհ, այլ նաեւ իր անպատիժիությամբ:

- **Ինչու մենք չենք կարող մոռանալ այս ոճրագործությունը**

Թուրքիայի պաշտպանները, հանդես գալով որպես հայ ժողովրդի բարերարներ, խորհուրդ են տալիս չպայքարել ցեղասպանության ճանաչման համար, պատճառաբանելով, որ դա իբր կնորոգի հին վերքերը, կհիշեցնի անցյալի սարսափելի դեպքերն ու կխոչընդոտի հարեւանների հետ բարեկամական հարաբերությունների հաստատմանը: Եւրոմիակ հենց Հայաստանում հայտնվել է քաղաքական շարժում, որի համախոհները խորհուրդ են տալիս չզբաղվել անցյալով, մոռանալ այն ամենի մասին, ինչ եղել է անցյալում եւ նայել

անխուսափելի է: Սակայն այս հարցին վերջնական լուծում կարող է տալ միայն Թուրքիայի դիրքորոշումը, նրա պատրաստակամությունը՝ լուծելու այս խնդիրը պետական մակարդակով միջազգային իրավունքի հիմունքներով: Մուլն հողվածը լույս է տեսել «Իզվեստիայի» երեկվա համարում:

• **Ս. ՖՅՈՂՈՐՈՎԻ ԱՆՎԱՆ ԹՈՇԱԿ՝ ՀԱՅ ԵՐԵՔ ԱԿԱԳԵՄԻԿՈՍՆԵՐԻ**



ԵՐԵՎԱՆ, 9 ԱՊՐԻԼ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Վերջին տարիների լավագույն գիտական արդյունքների համար՝ ՀՀ ԳԱԱ նախագահության փետրվարի 5-ին ընդլայնված նիստում առաջադրված երեք ակադեմիկոսների շնորհվել է ակադեմիկոս, մշակութային ակնաբույժ Սվլատոսլավ Ֆյոդորովի անվան միանգամայն թոշակ եւ պատվոգիր: Այդ պատվին են արժանացել լեզվաբան Գեորգ Ջահուկյանը՝ «Լեզվի ընդհանուր տեսություն» մենագրության համար, մեխանիկ Բենիամին Աբրահամյանը՝ «Արածգականության տեսության տարածական խնդիրները» ու «Մակերեւութային ալիքները եւ տատանումները առածգական միջավայրի հետ հարակցված մարմիններում» մենագրությունների եւ բուսաբան Էլեոնորա Գաբրիելյանը՝ «Հայաստանի ֆլորա» աշխատության 10-րդ հատորի համար: Այսօր ԳԱԱ ակադեմիայում, հանդիսավոր պայմաններում, պարգևները հանձնեց Ռուսաստանի աշխատավոր ինքնակառավարման կուսակցության նախագահ Լեւոն Չախմախյանը, որի նախաձեռնությամբ Հայաստանում սահմանվել է Ս.Ֆյոդորովի անվան թոշակը: Նա պատվոգիր հանձնեց նաեւ ԳԱԱ-ի նախագահ Ֆադեյ Սարգսյանին: Լ.Չախմախյանը նշեց, որ նախատեսվում է հետագա սերտ համագործակցություն Հայաստանի գիտնականների հետ, թոշակները սահմանել եռամսյակային եւ ասորիճանաբար ավելացնել դրանց թիվը: Իսկ միանվագ մեկ թոշակը կազմում է 2 հազ. դոլար:

Ֆ. Սարգսյանը ՀՀ ԳԱԱ-ի ոսկե շքանշան հանձնեց Լեւոն Չախմախյանին:

• **ՀԻՆ ՋՈՒՂԱՅԻ ՀՈՒՇԱՐՉԱՆՆԵՐԻ ՈՂՆՉԱՑՄԱՆ ՀԱՐՑԸ ԸՆՆԱՐԿԵԼՈՒ ԵՎՐԱՆՈՐՀՐՈՒՄ**

ՄՏՐԱԲԱՌԻԳ, 4 ԱՊՐԻԼ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ՀՀ Աժ պատգամավոր Աշոտ Գալոյանը Եվրախորհրդի վեհաժողովի լիագումար նիստում ներկայացրել է Հին Ջուղայի գերեզմանատան նկատմամբ Ադրբեջանի իրականացրած բարբարոսական գործողությունները, եւ արդյունքում խնդիրը մտել է Եւրախորհրդարանական վեհաժողովի մշակույթի հանձնաժողովի օրակարգ: Ըստ «Ազատության», հարցն առաջիկայում դրվելու է քննարկման:

Հայոց Սփյուռք

• **ԿՈՄԻՏԱՍԻ ԱՐՉԱՆԻ ԲԱՅՈՒՄԸ «ՖԻԳՈՐՈՅԻ» ԲՆՈՒԹԱՎՈՐՄԱՐ**

«Ազգի» ապրիլի 24-ի համարում նշվել է, որ այդ օրը Փարիզի կենտրոնում բացվելու է Կոմիտասի արձանը: «Կոմագիտոր, երգահան Կոմիտասի եւ 1915-ին Օսմանյան կայսրությունում իրականացված 20-րդ դարի առաջին ցեղասպանության զոհ 1500000 հայերի հիշատակին» մակագրությամբ արձանը տեղադրված է Փարիզի Կանադա հրապարակի մի ժառուղում Էյֆելի աշտարակից 500 մ հեռու: Ֆրանսիայի տեղեկատվությունը օգտագործելով՝ «Ֆիգարո» թերթը մանրամասնում է, որ Կոմիտասի 4 մետրանոց բրոնզե արձանը գտնվում է Մեծ պալատի մոտ Ալբեր Ա-ի առափնյակից ոչ հեռու: «Հայոց ցեղասպանության զոհերի փարիզյան առաջին հուշարձանը» վերտառությամբ հողվածում թերթը գրում է, որ բացման արարողությանը մասնակցել են Փարիզի քաղաքապետ Բենար Դլանտեն, Ֆրանսիայում ՀՀ դեսպան

Էդվարդ Նալբանդյանը եւ Ֆրանսիայի տեղական ազատությունների նախարար Պատրիկ Դեյեշյանը: Արձանի հեղինակն է հայ քանդակագործ Դավիթ Երեւանցին: «Հայ երաժշտության անուրանալի դեմք Կոմիտաս վարդապետը խելագարվել է ցեղասպանության սարսափներից եւ վախճանվել է Փարիզում 1935 թ.», գրում է «Ֆիգարոն», ավելացնելով, որ Կլոդ Դեբյուսին նրան համարում էր «բացառիկ կոմպոզիտոր»:

Բացումից առաջ ելույթ ունենալով՝ արն Դլանտեն հայտարարել է. «Փարիզն արժանին է մատուցում հայ ժողովրդին», հիշատակելով նաեւ Ֆրանսիայի ազատագրման համար զոհված հայ մարտիկներին: Փարիզի քաղաքապետի խոսքերով, «21-րդ դարի թուրք ժողովուրդը չի կարող մեղավոր համարվել Օսմանյան կայսրության հոգեվարքի պահին կատարված դեպքերի համար»: Նա հույս է հայտնել, թե հուշարձանը կբերի հաշտություն:

Ֆրանսիայում ՀՀ դեսպան Էդվարդ Նալբանդյանն իր ելույթում մասնավորապես նշել է ճշմարտության ընդունման կարեւորությունը, ասելով. «Հայտության ուղին ոչ թե մոռացումն է, այլ հանձնառու հիշողությունը»:

«Ֆիգարոն» գրում է, որ հուշարձանի ստեղծման գաղափարը ծնունդ էր առել դեռ ժակ Շիրակի քաղաքապետության օրոք, եւ առաջին քարը դրվել էր 1978 թ. Մեծ պալատի այգում: Սակայն հետագայում ծրագիրը ձախողվել էր: Ֆրանսիայի երեք տասնյակ քաղաքներում կան ցեղասպանության զոհերի հուշարձաններ: Ֆրանսիան Հայոց ցեղասպանությունը 2001 թ. ճանաչել է օրենքի տեսքով: 450 հազար ֆրանսիացիներ կազմում են Արեւելյան Եվրոպայի խոշորագույն հայ համայնքը: Արարողությանը ներկա են եղել Շառլ Ազնավուրը, Ֆրանսիայի հայկական կազմակերպությունների համակարգիչ խորհրդի նախագահ Արա Գրիգորյանը, կրոնական գործիչներ: Հայերից շատերը դժգոհություն են հայտնել պատվամոռանի մակագրության առթիվ, ասելով, որ հարկավոր էր ավելացնել «երիտթուրքերի կառավարության կողմից» բառերը: Մինչդեռ Փարիզի թուրքական դեսպանությունը դեռ բացումից առաջ «ափսոսանք» էր արտահայտել եւ մակագրությունը որակել «հիմնազուրկ եւ պատմական իրողություններին հակասող»:

• **ՄՈՍԿՎԱՅԻՆ ՆՇՎԵՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԸ**

Ապրիլի 24-ի առավոտյան Մոսկվայի Քրիստոս Ամենափրկիչ եկեղեցու բակում տեղադրված խաչքարի մոտ էր հավաքվել ռուսահայ համայնքի մի զգալի հատված՝ հարգանքի տուրքը մատուցելու 1915 թ. Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին: Խաչքարին ծաղկեպսակներ դրեցին ՌԴ-ում ՀՀ դեսպան Արմեն Սմբատյանը, Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայ առաքելական թեմի առաջնորդ Եգրաս Եպս. Ներսիսյանը, Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանը, «Արարատ» մշակութային ընկերության, այլ հայկական կազմակերպությունների ներկայացուցիչները: Թեմի առաջնորդը զոհերի հիշատակին նվիրված պատարագ մատուցեց, որի ավարտին անսպասելի զոհանքեցին եկեղեցու զանգերը: Այդպես ռուս ուղղափառ եկեղեցին իր հարգանքի տուրքը մատուցեց անցած դարասկզբին աննախադեպ ոճի զոհ դարձած մեր հայրենակիցներին:



Օրվա երկրորդ կեսին, արդեն ՌԴ-ում Թուրքիայի դեսպանության շենքի առջեւ հավաքված հոծ բազմությունը իր բողոքը հայտնեց այդ պետությանը, որը չի ցանկանում ճանաչել իր նախորդների կատարած հանցանքը: Այստեղ նույնպես բացմաթիվ հայկական կազմակերպություններ էին ներկայացված Ռուսաստանի հայերի միություն, ՀՀԳ, «Այգեձոր» հայրենակցական միություն, Սիաբանություն ակումբ եւ այլք: Մուլն փաստը բավական հետաքրքրական է, քանզի առաջներում այսքան շատ հայկական կազմակերպություններ միասնական գործողություններ չէին կատարում: Միջցառումը թերեւս, հիշարժան էր նաեւ այն առումով, որ, ի տարբերություն նախորդ տարվա, Մոսկվայի քաղաքապետարանը չէր կազմակերպել փողոցի երթեր, ինչը զգալիորեն խանգարեց ցույցի անցկացմանը:

Օրվա ավարտին, ԻՏԱՆԵՍԱՍ լրատվական գործակալության նիստերի դահլիճում Ռուսաստանի հայերի միությունը ցանքերով կազմակերպվեց հուշ երեկո նվիրված ցեղասպանության զոհերի հիշատակին:

ՈՍԿԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ, Մոսկվա

• **ՎՆԱՍՎԵԼ Ե ԲԱՍՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ**

ԵՐԵՎԱՆ, 14 ԱՊՐԻԼ, ՆՈՅՅԱՆ ՏԱՄԼԱ: Իրաքի 2-րդ խոշոր քաղաք Բասրայի հայոց եկեղեցին թեթևորեն վնասվել է, հաղորդում է Պոլսում հրատարակվող «Մարմարա» օրաթերթը վկայակոչելով Նյու Յորքի Արեւելյան թեմի առաջնորդարանին: Բացի Բաղդադի 3 եկեղեցիներից, հայկական եկեղեցիներ կան Բասրայում, Քիրքուկում, Չախույում եւ Մոսուլում: Այդ 7 եկեղեցիներից թեթևակի վնասվել է միայն Բասրայի եկեղեցին:

Շվեդիայի հայկական միությունները համակարգող կենտրոնը պայտեզներն պատրաստվում է ավելի սերտ համագործակցել «Կենդանի պատմություն» պետական գրասենյակի հետ:

• ՀԱՅՈՑ ՏԵԴԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԲՆՆԱՐԿՎԵՑ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԻՋԱՊՈՎԱԾՆԻ ԽՈՐՀՐԴՎՈՐՈՒՄ

Մարտի 28-ին ճապոնիայի Հիոսիմա քաղաքում, որտեղ 1945 թ. օգոստոսի 6-ին Մ. Սահանգները միջուկային առաջին ռումբ էր պայթեցրել, Գերմանիայից Մ. Սահանգներից, ճապոնիայից, Ավստրալիայից, Շվեյցարիայից, Ինդոնեզիայից և Մեծ Բրիտանիայից հրավիրված գիտնականների մասնակցությամբ տեղի ունեցավ միջազգային խորհրդածողով նվիրված գեղասպանության համեմատական քննության միջոցով ընդհանրությունների հասնելու խնդիր: Քննարկվող գեղասպանությունների թվում համեմատվել են հայկական, ռուսադրական, Արևելյան Թիմորի, ավստրալիական արդիագների, Կամբոջիայի, Ինդոնեզիայի և Կենտրոնական Աուրանի պարագաները: Հատուկ ուշադրություն է արժանացել Ռաֆայել Լենքինի աշխատանքը «գեղասպանություն» տերմինի ստեղծման և ՄԱԿ-ի համապատասխան օրենքի ընդունման գործում: Իր դեռևս անտիպ ինքնակենսագրության մեջ Լենքինը խստապահ է, որ իր վրա մեծագույն տպավորություն է թողել Հայոց անպարտի ճեղքասպանությունը:

Հրավիրված գիտնականների շարքում է եղել նաև պրոֆ. Վահագն Ն. Տարյանը, որի ներկայացրած ուսումնասիրությունը կրում էր «Ուրվագծեր 20-րդ դարի գեղասպանությունների հայկական, հրեական և ռուսադրական օրինակները»: Գիտնականը ներկայացրել է տվյալ գեղասպանությունների միջև եղած տարմանություններն ու առնչությունները:

Վ. Տարյանի ելույթից հետո ներկայացրած միակային քվեարկությամբ որոշել են նրա վերլուծությունը հիմք ընդունել 20-րդ դարի մյուս գեղասպանությունները համեմատելու համար: Նմանապես, նա ընտրվել է Հիոսիմայի համալսարանի դախիժում կայացած այդ խորհրդածողովի նախագահ:

• ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅՈՒՄ ԱՊՐԻԼԻ 24-Ը ՀԱՅՈՑ ՏԵԴԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՇՆԱՎԻ ՕՐ

ԿԱԼԻՖՈՐՆԻԱ, 9 ԱՊՐԻԼ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Կալիֆորնիայի սենատը հաստատել է ապրիլի 24-ը հայոց գեղասպանության հիշատակի օր հռչակելու շուրջ օրինագիծ: Չորրորդ տարի է, որ սենատը հաստատում է նման օրինագիծ պատրաստված նահանգային սենատոր Չաք Փուչիկյանի կողմից: «Քիչ թվով հայեր կան, որոնք ուղղակի չեն տուժել 1915-ի գեղասպանությունից, և հայտարարել է Փուչիկյանը, որի մայրական պապերը ես գոհվել եմ: և Ողբերգությունը ես ցավը խորացվել են տասնամյակների ժխտողականության ժամանակաշրջանում», նշել է նա: Թուրքական մշակութային ընկերության աշխատակից Մեթե Քարաջան առաջարկել է, որպեսզի օրինագիծից դուրս թողնվի «գեղասպանություն» բառը, ինչպես նաև նշվի հայերից բացի այլ ազգային փոքրամասնությունների ոչնչացման մասին: Այս առնչությամբ Փուչիկյանը հայտարարել է, որ մանտրոիսակ դրսեւորումները հովանավորվում են Թուրքիայի ազգայնական շրջանակների կողմից:

• ԱՄՆ 167 ԿՈՆԳՐԵՍԱՎԱՆՆԵՐ ԿԴՉ ԵՆ ԱՐԵՆ ԲՈՒՇՆԻՆ ԵՆԱՎԵՆ ՀԱՅՈՑ ՏԵԴԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 15 ԱՊՐԻԼ, ԱՐՄԵՆԴՐԵՄ: ԱՄՆ 167 կոնգրեսականների անունից նախագահ Ջորջ Բուշին հղված նամակում կոչ է արվում նրան ապրիլի 24-ի հիշատակության ուղերձում պատշաճորեն ճանաչել Հայոց գեղասպանությունը: ԱՄՆ Կոնգրեսի հայկական հարցերով հանձնախմբի համանախագահներ Ջո Նոլենբերգի և Ֆրենկ Փալուսի երկու հրապարակած նամակը, նախորդ տարվա համեմատությամբ հինգ ստորագրությամբ ավելի է:

Կոնգրեսականների նամակում մասնավորապես ասված է. «1915 թվականին հայ ժողովրդի հանդեպ իրականացված չարագործությունն ապրիլի 24-ի Չեր ուղերձում պատշաճորեն գեղասպանություն ճանաչելով դուք տուրք կտաք ԱՄՆ-ի պատմական առաջատարությանը և կիիշեցնեք աշխարհին այն ժողովրդավարական ու մարդասիրական արժեքների մասին, որոնց վրա հիմնված է մեր երկիրը»: Անցած տարի իր ուղերձում նախագահ Ջ. Բուշը Հայոց գեղասպանությունը որակեց պարզապես «սպանություն», հետագայում մեծացրեց ճնշումը Թուրքիայի վրա ընդունելու «գեղասպանություն» տերմինը, սակայն, չգնաց այնքան առաջ, որքան միջազգային հանրությունը, մասնավորապես Ֆրանսիան, Իտալիան, Բելգիան և Վատիկանը, որոնք բոլորն էլ ինչպես հարկն է ճանաչել են Հայոց գեղասպանությունը:

• ԱՏԱՄԲՈՒԼՈՒՄ ԹՈՐՊԱՆԱԲԱՐ ՀՐԱՏԱՐԱԿՎԵՑ «ՔԱՆԵՆԹ ՓԱՇԱՅԻ ՄՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ» ՆՅՈՒՅԸ

1921 թ. մարտի 15-ին Բեռլինում հայ վրիժառու Սողոմոն Թեհլերյանի դիպուկ կրակոցով սպանվեց Հայոց ցեղասպանության գլխավոր կազմակերպիչ, արյունարբու Թալեաթ փաշան: Նույն թվականի հունիսին Բեռլինի նահանգային երկրորդ ատյանի դատարանը քննեց Թալեաթի սպանության գործը եւ արդարացրեց Սողոմոն Թեհլերյանին: Թերեւս դրանով էլ Գերմանիայում հաստատվեց Հայոց ցեղասպանության մեջ Թալեաթի անմիջական պատասխանատվությունը:

Թալեաթ փաշայի սպանության գործի քննումը 20-րդ դարի սկզբների թերեւս կարեւորագույն դատավարությունն էր: Ահա թե ինչու Ստամբուլի «Ալկոս» շաբաթաթերթն ապրիլի 4-ի համարում գրում է. «Ոչ միայն իրավաբանական, այլև քաղաքական պատմության տեսակետից մեծ կարեւորություն է ներկայացնում Թալեաթ փաշայի սպանության դատավարությունը»:

«Ալկոսը» միաժամանակ տեղեկացնում է «Թալեաթ փաշայի սպանության դատավարությունը» վերնագրով գրքի մասին: Դա 2003 թ. փետրվարին լույս է տեսել Ստամբուլում՝ թարգմանությամբ Դոդան Աքհանլը: Գիրքը 182 էջ է, հրատարակել է «Բեյզեթ» հրատարակչությունը: Վերոհիշյալ դատավարության նյութերը 1921 թվին Արմին Վեգների, իսկ 1980 թ. դուկ Թեսա Ղաֆանի աշխատասիրությանը հրատարակվել էին Գերմանիայում: Ուրեմն, Աքհանլըն թարգմանելով վերոհիշյալ արձանագրությունները, Հայոց ցեղասպանության հետ սերտորեն առնչվող այդ դատավարությանը ծանոթանալու հնարավորություն է ընձեռել թուրք ընթերցողին:

Սա կարելու է այն առումով, որ դատավարությունը Մեծ եղեռնի ականատեսների մասնակցությամբ վերածվել էր 1915 թ. Հայոց ցեղասպանության քննարկմանը նվիրված պատմական ֆորումի: 1915-16 թթ. օսմանյան բանակում ծառայող Արմին Վեգներն իր գրքում ոչ միայն ականատեսի աչքերով նկարագրում, այլև լուսանկարներով հաստատում է հայերի ցեղասպանությունը:

Սա դատավարությունը քննելով ժողովուրդների պատմության տեսանկյունից, իր գրքի նախաբանում գրում է. «Ներքին գործոց նախարարի կյանքին ուղղված հայ ուսանողի գործողությունն ու դրան հետևող դատավարությունը գերմանացի ժողովրդի ուշադրությունը հրավիրեցին Առաջին համաշխարհային պատերազմի ամենաարյունոտ իրադարձությունների վրա: Շճմարտությունն իր ողջ մերկությանը երեսն հանվեց: Երիտթուրքերը պարբերաբար կոտորածի էին ենթարկել ողջ ժողովրդին: Դատավարության ընթացքում կատարվեց աներեւակայելի տանջվող մեղադրյալն առանց որևէ բառ արտասանելու Մեծ եղեռնի տպավորությամբ հանկարծ տուժողի դերում հայտնվեց: Նա արդեն մեղադրյալ Սողոմոն Թեհլերյանը չէր, այլ գոհի արյունոտ ուրվականը»:

Ի դեպ, «Ալկոսը» մեր ուշադրությանը ներկայացնելով Վեգների դատավարության վերաբերյալ այս դիտարկումը, որին Աքհանլիի շնորհիվ հաղորդակից է դառնում թուրք ընթերցողը, մեջբերում է կատարում նաև նրա մեկ այլ դիտարկումից, որտեղ նա, նկատի ունենալով դատարանում Թեհլերյանի արդարացումը, գրում է. «Այս վճիռը թուրք ժողովրդին դատապարտելու միտում չունի: Կոտորածը ոչ թե նա, այլ թուրքական իշխանություններն են իրագործել: Գերմանացի հյուպատոսները իրենց զեկուցագրերում բազմաթիվ վկայություններ են բերում տեղացի այն պաշտոնյաների մասին, ովքեր խուսափում էին կիրառել կոտորելու վերաբերյալ իշխանության հրամանները: Նրանք ոչ միայն թուրք ժողովրդի, այլև հայ ժողովրդի բարեկամն են»: Մենք էլ տեղեկացնենք, որ «Թալեաթ փաշայի սպանության դատավարությունն» աշխատության թարգմանիչ Դոդան Աքհանլըն գերմանաբանակ թուրք գրող է, Ալի Էրթեմի «Միությունը ընդդեմ գեղասպանության» կազմակերպության փոխնախագահը: Այլ կերպ, Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը նրան ամենեւին խորթ չէ: Ինչ վերաբերում է «Բեյզեթ» հրատարակչությանը, ապա դա հիմնադրել է հայտնի թուրք մտավորական Ռազըֆ Չարաքուլուն: Ուրեմն, պրն Չարաքուլուի ղեկավարությամբ գործող հրատարակչությանն առավել եւս չպետք է խորթ լինի այդ խնդիրը, ինչի միջազգային ճանաչման ուղղությամբ ջանքեր են գործադրում ինչպես Ալի Էրթեմն, այնպես էլ Դոդան Աքհանլըն և Ռազըֆ Չարաքուլուն:

ՀԱԿՈՐ ՉԱՔՐՅԱԼ «ԱԶ»

- ԱՄՆ-Ը ԹՈՒՐԹԻԱՅԻՆ ՀՈՐԴՈՐՈՒՄ Է ԲԱՅԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ ԱՄՅԱՆՆԵՐԸ

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 11 ԱՊՐԻԼ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ԱՄՆ պետդեսպարտամենտի հաշվետվությամբ կոչ է արվում թուրքիային համել Հայաստանի տնտեսական շրջափակումը: Նրանում ասված է, որ ԱՄՆ կառավարությունը հորդորում է թուրքիայի կառավարությանը հնարավորության դեպքում բացել սահմանները Հայաստանի հետ:

Հարցը վերջին անգամ թուրք պաշտոնատար անձանց հետ քննարկվել է ապրիլի 24ին Անկարայում՝ ԱՄՆ պետքարտուղարի այցի ժամանակ: Նշվել է, որ թեթևացվի հայկերաբանության սահմանը, դրանից կնվազեն տրանսպորտային ծախսերը, կգարգանա Հայաստանի և թուրքիայի միջև առևտուրը, որը մեծապես կնպաստի Հայաստանի և Արևելյան թուրքիայի տնտեսության զարգացմանը: Դրա օգուտները կզգացվեն ամբողջ տարածաշրջանում, ասված է հաշվետվության մեջ:

Նաև ասված է, որ Հայաստանը կարող է ծառայել որպես թուրքիայի և վերջինիս ամենամտերին բարեկամ Ադրբեջանի միջև տրանսպորտային անենակարճ և ուղիղ միջանցք: Արդյունքում անխափան կգործեն Ստանբուլն ու Բաքուն իրար միացնող երկաթուղին, ինչպես նաև կապը Սիջերկոսկան և Կասպից ծովերի միջև:

Հաշվետվության մեջ այլևս ոչինչ ասված չէ Անկարայում Հայաստանին վերաբերող Փաուելի կողմից անցկացված բանակցությունների մանրամասնությունների մասին:

- ԸՍՏ «ԱՂԱՏՈՒՅՈՒՆ» ՇԱՂԻՈՎԱԿԱՅԻՆ

ԱՄՆ պետդեսպարտամենտի նաև դրական մեղմ խոսքեր է ասում Հայաստանի հասցեին «2002 թվականից Անկարայի հետ դիվանագիտական տարբեր մակարդակների հարաբերություններն ավելացնելու համար»:

- ԿԻՊՐՈՍԻ ԿՈՉԸ ԹՈՒՐԹԻԱՅԻՆ

ՆԻԿՈՍԻԱ, 25 ԱՊՐԻԼ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Կիպրոսի խորհրդարանի նախագահ Դիմիտրիս Նիխոսի հարապարհաբար ապրիլի 24ին կոչ է արել թուրքիային ճանաչել հայերի 1915 թվականի ցեղասպանությունը: Նա հայտարարել է, որ թուրքիայի կողմից այդ փաստի ընդունումը կարելու էր այլ կլիներ միջազգային իրավունքի սկզբունքները հարգելու ուղղությամբ: Նիխոսի հարապարհաբար նաև նշել է, որ 1915 թվականի իրադարձությունները 20ևրդ դարի պատմության մեջ առաջին ցեղասպանությունն էին, որի իրականացումը հնարավոր դարձավ նախաժամադրաբար առաջին աշխարհամարտի ժամանակաշրջանում միջազգային հանրակցության պասսիվ արձագանքի հետևանքով:

- ԱՄՆ ՊԱՆՈՒԼՈՅԻ ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ԾԱՆԱԶՈՒՄ Է ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Բրազիլիայի խոշորագույն Սան Պաուլո նահանգի Օրենսդրական ժողովն օրենք է ընդունել ապրիլի 24ևր «1915 թվականի ապրիլյան ցեղասպանության 1,5 միլիոն նահատակների հիշատակի օր սահմանելու մասին»: Դրանով վերախմբագրվել է 1988 թվականի մայիսի 19ևին Նույն խորհրդարանի կողմից ընդունված «Հայ ժողովրդի հետ համերաշխության օր» թիվ 6468 որոշման անվանումը:

Օրենսդրական նախաձեռնության հեղինակ, Բրազիլիայի սցիալ և դեմոկրատական կուսակցության պատգամավոր Էդսոն Ապարեսիդոյի օրենքը հիմնավորող փաստաթղթի մեջ նշվում է, որ հիշյալ որոշումով նահանգային խորհրդարանն իր հարգանքի տուրքն է մատուցում 1915 թվականին թուրքական ջարդերին զոհ գնացած 1,5 միլիոն հայ նահատակներին, այդ թվում խաղաղ բնակիչներին, ծառայողներին ու մտավորականներին, որոնք զանգվածաբար տեղահան արվեցին իրենց բնակավայրերից և թուրքական զինվորականության կողմից սառնասրտորեն ու բարբարոսաբար ոչնչացվեցին գաղթի ճանապարհներին: Հիշյալ օրենքը, որով ըստ ելույթի ճանաչվում է Հայոց ցեղասպանության փաստը, ընդունվել է միաձայն. նրա օգտին են քվեարկել Օրենսդրական ժողովի տարբեր կուսակցություններ ներկայացնող բոլոր 94 պատգամավորները:

ՀՆԱՐԱՎՈՐ ՉԷ ՋՆՋԵԼ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Ջրույց դոկտոր, պրոֆեսոր Լավրենտի Բարսեղյանի հետ

Ցեղասպանության թանգարանի նստիտուտի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր Լավրենտի Բարսեղյանը Հայոց ցեղասպանության լավագույն ուսումնասիրողներից է բնականաբար: Մենք մի քանի անգամ գրուցել ենք եղեռնի մասին ընդհանրապես: Այս անգամ մեր գրույցի թեման փոքրիկն է կոնկրետացված է: Խոսքը 19ևրդ դարավերջից սկսած հայկական պատմամշակութային արժեքների ավերումների մասին է:

- Պոն Բարսեղյան, բացի մարդկային և տարածքային կորուստներից, դաժան արհավիրքի տարիներին մենք ունեցանք նաև մշակութային մեծ կորուստներ, որը վկայում է թուրքական իշխանությունների ծրագրված քաղաքականության մասին:

- Այդպես է, որովհետև լոկ միլիոնավոր մարդկանց սպանությունները, տեղահանությունները դժվար թե կատարյալ դարձնեն հայոց ջարդը: 19ևրդ դարի վերջը և 20ևրդ դարի սկիզբը հայ ժողովրդի համար դարձավ ճակատագրական: 1890ևական թթ. իրականացված համիդյան արյունոտ ջարդերին հաջորդեց 1915թ., Աբդուլ Համիդի ոճրագործ քաղաքականությունը որդեգրած և երիտթուրքերի կազմակերպած կոտորածներին նաև նյութական արժեքների սխտեմատիկ ոչնչացման ոչ պակաս ահավոր բարբարոսությունը, որն, ըստ ելույթի, ցեղասպանության երկրորդ կողմն էր: Այնուհայտ է, որ բնաջնջելով հայ ժողովրդի խոշոր գանգվածին, նրա ստեղծած մշակութային արժեքները, թուրքերը նպատակ ունեն պատմության ասպարեզից ջնջել այն ամենը, ինչը կապված էր հայ ժողովրդի հետ: Աննկարագրելի է 1915 թ. հայ ժողովրդի կրած մշակութային ողջ կորուստը: Սակայն նմանատիպ կորուստներ ունեցել ենք նաև 1894-96 թթ. ջարդերի ժամանակ, որի արդյունքում ոչնչացվել կամ մզկիթների են վերածվել 568 եկեղեցիներ: Ըստ Մ. Օրմանյանի տեղեկության, 1894-96 թթ. ջարդերի ժամանակ «վանք չէ եղած, որ անձեռնմխելի ըլլայ, եկեղեցի չէ մնացած, որ կամ քանդուած, կամ պղծուած, կամ մզկիթի փոխարկուած չըլլայ»:

- Պոն Բարսեղյան, հայ մշակութային արժեքների բնաջնջման մասին տեղեկություններ ստացվել են նաև ավելի վաղ:

- Այո: 1896 թ. տեղեկագրությունից հայտնի է դառնում, որ մահմեդական խուժանն իր կատաղությունն առաջին հերթին թափում էր հայկական կրոնական և կրթական կենտրոնների, մատենադարանների վրա: Կողոպտվել և այրվել են Վասպուրականի Վարազ, Նարեկա, Կարմրավոր, Ս. Գրիգոր Լուսավորիչ, Մեծփա, Աճաղի Ս. Աստվածածին վանքերը, նաև Աղթամարի Ս. Խաչ եկեղեցու պահոցը, ուր գտնվել է եկեղեցու ողջ հարստությունը: Նույն ճակատագրին են արժանացել նաև Լիմ և Կտուց անապատների պահոցները: Միայն Նարեկա և Վարազ վանքերից կողոպտված շարժական և անշարժ գույքի արժեքը հասել է թուրքական 1000 լիրայի, ոչնչացվել են նաև մատենադարանները: Կողոպտվել է Նարեկա վանքում տարիներ շարունակ պահվող Կենաց փայտի մատուցը և մշակութային այլ արժեքներ: Գրիգոր Նարեկացու գերեզմանը (10ևրդ դար), որ դարեր շարունակ եղել է սրբավայր և ուխտատեղի, ավերվել ու հիմնովին ոչնչացվել է:

- Տարբեր տեղեկատուներ նշում են հայկական մշակութային և հոգեւոր կոթողների մասին, որոնք ոչնչացվել են այդ տարիներին:

- Ըստ ֆրանսիական բանակի սպա Ռ. Հյուլպեի (որը Արեւմտյան Հայաստանում ուսումնասիրել է հայկական և հունական եկեղեցական, նաև մշակութային այլ կոթողներ) 1898ևին կազմած տեղեկագրի Արեւմտյան Հայաստանում եղել է 218 հայկական վանք և 1740 եկեղեցի: 1904ևին Կ. Պոլսում իրատարակված պաշտոնական ցուցակագրությունը վկայում է, որ Օսմանյան պետությունում եղել են 228 հայկական վանք և 1958 եկեղեցի: Պողոս Նուբարի և Ավետիս Ահարոնյանի կողմից 1919ևին Փարիզում ստորագրած հուշագրի համաձայն թուրքիայի տարածքում նշվում են լրիվ կամ մասամբ կործանված 83 եպիսկոպոսանիստ

առաջնորդարաններ, 1860 եկեղեցի եւ մատուռ, 229 վանք: Գ. Մերոսի ուսումնասիրության համաձայն, ողջ Թուրքիայի տարածքում եղել են 210 վանք, 700 վանական եկեղեցի, 1639 ծխական եկեղեցի, ընդամենը 2549 եկեղեցական միություն: Ի դեպ, նրա ցուցակում նշված չեն եղել կաթոլիկ հայ համայնքի վանքերն ու եկեղեցիները: Հայ բողոքականներն ունեցել են 310 ժողովարան:

- *Պոն Բարսեղյան, հայ մշակութային եւ պատմական արժեքների պահպանման մասին միջազգային կազմակերպություններն իրենց վերաբերմունքը չեն ցուցաբերում:*

- 1974 թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի կատարած 913 կառույցների ուսումնասիրումը ցույց է տվել, որ 464-ն անհետացել է, 252-ն ավեր վիճակում է, իսկ 197-ը կիսականգուն:

- *Ոչնչացված արժեքների թվում շատ են եղել նաեւ այնպիսի արժեքներ, որոնք անվերականգնելի են գուցե: Օրինակները շատ են, չէ՞:*

- Իհարկե: Այսպես. թալանելով Սեբաստիայի Ս. Նշան վանքը, թուրք զինվորները, չգտնելով դարավոր այս վանքի գաղտնարանի բանալիները, կոտորում են պատին ազուցված երկաթյա դուռը եւ թալանում եկեղեցական թագեր, արժեքավոր ձեռագրեր, ոսկե եւ արծաթե իրեր, ընդամենը 3000 կտոր իր եւ 293 ձեռագիր: Ոչնչացվել են միակ եւ հազվագյուտ ձեռագրերի օրինակներ, նաեւ 10-ը դարում Գրիգոր Նարեկացու ձեռքով գրված «Նարեկը»: Մշո Ս. Կարապետ վանքի Ս. Գեորգ վկայարանի մատենադարանը հարուստ է եղել խաչագարդ, անգին քարերով ընդելուզված մագաղաթներով: Վերջիններիս հետ կորել են նաեւ Վարազա վանքում պահվող 150 մագաղաթ ձեռագիր մատյաններ: Որոշ տվյալներով, հայերի համար այդ ողբերգական ժամանակաշրջանում վերացվել են 20 հազարից ավելի ձեռագիր մատյաններ եւ հնատիպ գրքեր:

- *Իհարկե, փաստերն այնքան շատ են, որ սոսկ դրանց թվարկումը բազմաազար էջեր կզբաղեցնեն: Սակայն միայն փաստեր թվարկելը քիչ կլինեն:*

- Ցեղասպանության թանգարանի մատուցողը, որը գործում է ՀՀ ազգային ակադեմիայի կազմում, զգալի աշխատանք է տարել եւ տանում է եղեռնի ավերածություններն աշխարհի դատին ներկայացնելու համար: Կարծում են, որ քիչ բան չի արվել: Սակայն ավելին պետք է անել, ու, համոզված են, կանենք: Ողջ աշխարհը պետք է ընդունի Հայոց ցեղասպանությունը: Մարդկային հիշողությունը հնարավոր չէ ցնցել:

Մերգեց ԳԱԼՈՅԱՆ

«ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԵՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՈՒՇԵՐԸ ԵՒ ՀԱՏԿԱՊԵՍ ԳԵՐՄԱՆԻԱՆ»

Ասում է «Միությունը ընդդեմ ցեղասպանության» կազմակերպության նախագահ Ալի Էրթեմը Գերմանիայում գործող «Միությունը ընդդեմ ցեղասպանության» կազմակերպությունը հայտնի է Հայաստանում: Մեր հասարակության լայն շրջանակները ճանաչում են նաեւ կազմակերպության նախագահ Ալի Էրթեմին: Օրերս նա Մեծ եղեռնի գոհերի հիշատակին հարգանքի տուրք մատուցելու համար կրկին Երեւանում էր:

- *Սա Հայաստան կատարած ձեր երրորդ այցն է: Նախ ուզում են ձեզ շնորհավորել Ֆրիտյոֆ Նանսենի միջազգային հիմնադրամի ոսկե մեդալով պարգևատրվելու առթիվ: Դուք այդ մրցանակին արժանացաք Հայոց ցեղասպանության միջազգային ծանաչմանն ուղղված գործունեության համար: Ձեր կազմակերպությունն ինչպիսի՞ աշխատանքներ է կատարում:*

- Հիմնականում աշխատում ենք Հայոց ցեղասպանությունը պահել հասարակական կարծիքի ուշադրության կենտրոնում: Մեր աշխատանքներից կարելի է առանձնացնել ցեղասպանության մասին վավերագրական լուսանկարների ցուցահանդեսի կազմակերպումը, որն անցյալ տարի տեղի ունեցավ Ֆրանկֆուրտում: Ցուցահանդեսի կազմակերպմանը մեր միության կողքին ակտիվորեն մասնակցեց «Մարդու

իրավունքների գերմանակերպական միությունը» TUDAY-ը, որի համար մեծապես պարտական ենք Դոլան Աբխանլին եւ Ելրային:

Միաժամանակ փորձում ենք մերկացնել թուրքական պետության ազգայնամոլ քաղաքականությունը հակազդելով նրա հերյուրանքներին: Վերջերս Մալաթիա քաղաքում գործող Ինոնուի անվան համալսարանը հանդես է եկել «Ոչ թուրքական ցուցանակներով խանութներից առևտուր չանել» կոչով, որտեղ հայերի եւ հույների այսպես կոչված հակաթուրքական ծրագրերի մասին է հիշատակվում: Սա կոտորածի յուրատեսակ կոչ է: Ազգայնամոլությունն ու դրա պոթկունները, ցավոք, ձեւավորվում են Թուրքիայի համալսարանական շրջանակներում: Օրինակ, «Համաքաղաքացի, թուրքերեն խոսիր» քարոզարշավը Թուրքիայում սկզբնավորվել էր Ստամբուլի համալսարանի նախաձեռնությամբ: Մինչդեռ համալսարաններն այն հաստատություններն են, որտեղ ձեւավորվում են ուսուցիչներ, գիտնականներ, քաղաքական գործիչներ:

- *Դուք Հայաստան ժամանելիս ապրիլի 24-ին անպայման երեւանում էիք լինում, իսկ այս տարի ավանդույթը խախտեցիք: Ինչո՞վ դա բացատրել:*

- Դրա հիմքում ապրիլի 24-ին հենց Գերմանիայում միջոցառում կազմակերպելու ցանկությունն է: Այս տարի մեր կազմակերպությունը որոշել է Ֆրանկֆուրտում «Նախագազուշական հերթապահություն» նախաձեռնել: Միաժամանակ Հոլանդիայի Ասսեն քաղաքում տեղի հայ բարեկամների հետ մեկ այլ միջոցառում ենք կազմակերպում: Դրան մասնակցելու համար Հոլանդիա են իրավիճվել: Ինձնից պահանջեցին ելույթ ունենալ մերժել չէի կարող: Սակայն չէի կարող նաեւ Մեծ եղեռնի գոհերի հուշարձանին ճաղկեպակ ղնելու մեր կազմակերպության ավանդույթը խախտել: Այդ է պատճառը, որ ապրիլի 24-ի նախօրյակին եկա Երեւան:

- *«Միությունը ընդդեմ ցեղասպանության» կազմակերպությունը հիմնադրվել է 1998-ի սեպտեմբերին: Անցած տարիների ընթացքում ձեզ հաջողվե՞լ է կատարել այն առաջադրանքներն, ինչ դրվել են կազմակերպության առջեւ:*

- Մեր գլխավոր խնդիրը ստորագրահավաքի կազմակերպումն էր: Դա մեզ հաջողվեց, քանի որ 11 հազար 247 ստորագրություն ենք հավաքել: Կարողացանք նաեւ յուրաքանչյուր տարի ապրիլի 24-ին Երեւանում հարգել ցեղասպանության գոհերի հիշատակը: Մեզ հաջողվեց համերաշխության մեջ լինել հայ ժողովրդի հետ եւ ավանդույթ դարձնել այցերը: Սակայն ֆինանսական միջոցների սղության պատճառով չենք կարողանում պատրաստել եւ ցուցադրել ցեղասպանության մասին վավերագրական ֆիլմեր: Ի դեպ, վերոհիշյալ լուսանկարների ցուցահանդեսին ներկա էր Ցեղասպանության թանգարանի մատուցողի տնօրեն Լավրենտի Բարսեղյանը: Նրա ներկայությունը ցեղասպանության հարցում մարդկանց լուսաբանելու առումով չափազանց օգտակար էր:

- *Ձեր կազմակերպության նկատմամբ ինչպիսի՞ն է գերմանական հիշատակների վերաբերմունքը:*

- Թեեւ նրանք մեր գործունեությունը չեն խոչընդոտում, սակայն չեն էլ օգնում: Ավելին, երբ մենք պահանջեցինք, որ Գերմանիան ծանաչի Հայոց ցեղասպանությունը, նրանք դեմ դուրս եկան ասելով. «Ծանաչումը չի նպաստի Թուրքիայում ժողովրդավարության զարգացմանը: Սա այն հարցն է, որը հայերն ու թուրքերը պետք է երկխոսության միջոցով լուծեն»:

- *Երբ խոսքը երկխոսության է վերաբերում, ակամա հիշում են «Հայկերպական հաշտեցման հանձնաժողովի» մասին: Մեր ժողովրդի գերմանացի բարեկամ Թեսա Հոֆմանն ասել էր, որ հանձնաժողովի գործունեությունը լուրջ վնաս է հասցրել Հայոց ցեղասպանության ծանաչման ջանքերին: Ձեր կարծիքը:*

- Օրինակ, հանձնաժողովի թուրք անդամներից իլթեր Թուրքմենն ընդգծել էր, որ հանձնաժողովը Ցեղասպանության պնդումները չեզոքացնելու եւ միջազգային ճանաչումը խոչընդոտելու նպատակով է ստեղծվել: Սա ինձ համար անընդունելի մտտեցում է, վիրավորանք հայ ժողովրդի նկատմամբ: Ցեղասպանության հարցը չի կարելի բանավեճի առարկա դարձնել:

- *Գերմանիայում գործում են քրդական բազմաթիվ կազմակերպություններ: Ինչպիսի՞ն են ձեր հարաբերությունները նրանց հետ:*

- Նրանք նպատակ ունենում են մեր գործունեությանը եւ աջակցում միջոցառումներին: Գերմանիայում հրատարակվող քրդական «Օզգյուր պոլիտիկա» թերթը Հայոց ցեղասպանությանը նվիրված հոդվածներ է հրատարակում, սակայն քրդերն իրենց նախաձեռնությանը չեն դատապարտել Հայոց ցեղասպանությունը:

- Սա կարելի է պայմանավորել այն քրդերի առկայությանը, որոնք սերտորեն համագործակցելով օսմանյան իշխանությունների հետ, ակտիվորեն մասնակցել են հայերի կոտորածներին:

- Ինչ խոսք, այս փաստը իր դերն ունի: Սակայն ինձ թվում է, քուրդ մտավորականությանը առ այսօր չի հաջողվում հարթահարել այն տաբուն, ինչ դրված է Ցեղասպանության վրա: Իմ կարծիքով, քանի դեռ քրդերը չեն վերանայել իրենց պատմությունը եւ հատուկ ջանք չեն գործադրում, քուրդ ժողովուրդը հազիվ թե ի վիճակի լինի դատապարտել Հայոց ցեղասպանությունը: Հատկանշական է, որ այսօր Ցեղասպանության սպանակիքի առջեւ քրդերն են կանգնած: Կարծում եմ, առանց Հայոց ցեղասպանությունը դատապարտելու անհնար է խուսափել քրդերի ցեղասպանությունից:

- Թուրքիան ժխտում է Հայոց ցեղասպանությունը, իսկ քրդերը պնդում են, որ թուրքական պետությունն իրենք ժողովրդի նկատմամբ ցեղասպանություն է իրագործում: Ինչ եք կարծում, եթե քրդերը հայերի Ցեղասպանությանը զուցաբերած մասնակցության համար ներողություն խնդրեին, դրանով չէի՞ն նպաստի իրենց պայքարին:

- Շատ ճիշտ եք: Դա իսկապես կնպաստեր: Ավելին, դրանով քրդերն աշխարհի ժողովուրդների մեջ կարծանանային ավելի մեծ հարգանքի: Որքան ինձ հայտնի է, Քրդստանի վտարանդի խորհրդարանը «Հայոց ցեղասպանությունը դատապարտելու» որոշում է ընդունել: Որոշման տեքստն անձամբ չեմ տեսել: Դարգապես մամուլում այդ տեքստից որոշակի հատվածներ են հրատարակվել: Ես կցանկանայի, որ նման որոշումը ընդունող խորհրդարանի ներկայացուցիչը լիներ Ծիծեռնակաբերդում եւ հարգեր զոհերի հիշատակը: Դժբախտաբար, խորհրդարանի անդամներից այդ քայլին մինչեւ հիմա դիմել է մեկ մարդ, մա է մեր պատվիրակության հետ էր երեւան ժամանել: Ընդ որում ասորի է: Ցանկալի էր Ծիծեռնակաբերդում տեսնել քուրդ ժողովրդի քաղաքական ներկայացուցիչներին: Որոշում ընդունելն, ինչ խոսք, կարելու է, սակայն ավելի կարեւոր որոշմանը հետամուտ լինելն է եւ կատարելը դրանից բխող քայլերը: Ի դեպ, չնոռանանք նաեւ Եվրոպական երկրների խորհրդարանների մասին, որոնք իրենց խոստումը չեն հարգում, բայց երբ խոսքը սկզբունքին է վերաբերում, գոռում են բոլորից բարձր: 1987-ին Եվրախորհրդարանը ճանաչել է Հայոց ցեղասպանությունը: Թվում էր, թե դրան կհետեւեն Եվրամիության անդամ երկրների խորհրդարանները: Բայց դա տեղի չունեցավ: Կատարվում է ճիշտ հակառակը, իսկ օգտվում է Թուրքիան: Սա այն պարագայում, երբ Ցեղասպանության ճանաչումը Թուրքիայի նկատմամբ ոչ մի պատժամիջոց չի ենթադրում:

Ի վերջո, Ցեղասպանությունն իրագործվել է «քաղաքակիրթ» աշխարհի աչքի առաջ: Ուստի Հայոց ցեղասպանության համար պատասխանատու են միջազգային ուժերը՝ ԱՄՆ-ն, Անգլիան, Ֆրանսիան, Ռուսաստանը եւ հատկապես Գերմանիան: Եթե մարդու իրավունքները զոհաբերվում են այդ ուժերի շահերի համար, ապա ինքնաբերաբար ուսնահարվում են ժողովուրդների իրավունքներն ու հոգս են ցնդում արդարության մասին խոստումները, ինչին առ այսօր շարունակում ենք ակամատես լինել:

Պատրաստեց ՀԱԿՈՐ ՉԱՔՐՅԱՆԸ «ԱԶԳ»

«ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅԵՐԻ ՊՆԴՈՒՄՆԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐՆ ԵՆ ՏԱԼՈՒ»

Ասում է Գյուլը Փարիզում Կոմիտասի արձանի բացման առնչությամբ
Փարիզի «Կանադա» հրատարակում կբացվի Կոմիտասի արձանը: Արձանը խորհրդանշում է Մեծ եղեռնի զոհերին: Քանի որ Մեծ եղեռնի նկատմամբ Թուրքիան

հիվանդագին մոտեցում է ցուցաբերում, ուստի չուշացան արձանի բացման թուրքական արձագանքները:

Հակազդեցության բնույթի այս արձագանքները տարբեր դրսեւորումներ են ստացել: Դրանցից կարելի է առանձնացնել Փարիզում թուրքական դեսպանության գրավոր հայտարարությունը եւ Թուրքիայի արտգործնախարար Աբդուլլահ Գյուլի մամուլի համատեղ ասուլիսը պաշտոնական այցով Անկարայում գտնվող Ֆրանսիայի արտգործնախարար Դոմինիկ Վիլպենի հետ, որտեղ նա զգուշացրել է իր գործընկերոջը: Հակազդեցության մասին խոսելիս չպետք է նաեւ մոռանալ փարիզաբնակ թուրքերին եւ նրանցից թերեւս հայկական ծագումով տարբերվող թուրքահպատակ Ալեն Շիրինին:

Թուրքիայի դեսպանատան հայտարարությանն ապրիլի 23-ի համարում անդրադառնում է «Չաման» թերթը: Ըստ դրա, դեսպանատունը «այսպես կոչված Ցեղասպանությունը խորհրդանշող հուշարձանի տեղադրումը Փարիզում համարել է պատմության նենգափոխում», եւ նենգափոխումներից զերծ մնալու կոչ է արել: Այնուհետեւ դատապարտվել են արձանի մակագրության մեջ տեղ գտած արտահայտությունները՝ մատնանշելով. «Օսմանյան արիստիվները բաց են բոլոր գիտնականների առջեւ, Թուրքիան հարցին նվիրված լուրջ ուսումնասիրությունների արդյունքներից մտավախության որեւէ պատճառ չունի»:

Դեսպանատան հայտարարությանը, ինչպես նշում է «Վաքիթը», հետեւել է Փարիզում բնակվող թուրքերի հակազդեցությունը: Նրանք մատնանշել են, որ Կոմիտասի արձանի տեղադրումը պայմանավորված է «ոչ թե հայերի կարողություններով, այլ Թուրքիայի նկատմամբ Ֆրանսիայի վրեժխնդրությամբ»:

«Վաքիթը» վկայությամբ փարիզաբնակ թուրքերին է միացել նաեւ նույն քաղաքում բնակվող Ալեն Շիրինը եւ նա «այսպես կոչված Ցեղասպանությունը խորհրդանշող» արձանի առնչությամբ ասել է. «Ներկա դրությամբ Թուրքիան այն հարեւանն է, որի հետ լավ հարաբերվելու համար Հայաստանը պետք է առավելագույն ջանքեր գործադրեր, մինչդեռ հայերը դրա ճիշտ հակառակն են անում: Երբ Թուրքիան ուղղաթիռների պետապատվերից ֆրանսիացիներին դուրս մղեց, Ֆրանսիան որոշեց նրան պատժել եւ որպես պատժամիջոց օգտագործեց հայերին: Ֆրանսիայի եւ հայերի այս մոտեցումն ավելի ամոթալի է, քան ամոթանքի պատճառ հանդիսացող արձանի տեղադրումը»:

Ինչ վերաբերում է Ֆրանսիայի արտգործնախարարի հետ Գյուլի ասուլիսին, ապա դա տեղի է ունեցել նրանց հանդիպման ավարտին: Գյուլը պատասխանելով Հայոց ցեղասպանության վերաբերյալ թուրք լրագրողների հարցերին, ուշադրություն է հրավիրել այն ուժերի վրա, որոնք շահագրգռված են ստվեր զգել Թուրքիայի եւ Ֆրանսիայի համագործակցությանը, ընդգծելով վերջիններիս առիթ չտալու անհրաժեշտությունը:

Գյուլը նշել է, որ Ցեղասպանության մասին հայերի այնպիսի վերաբերմանը լավագույնս կարող են պատասխանները գնահատել, այդ իսկ պատճառով պետք է խոչընդոտել նման կարգի նախաձեռնություններին՝ չվնասելու համար երկու երկրների հարաբերությունները: Գյուլը Ֆրանսիայի արտգործնախարարին հիշեցրել է թուրք-ֆրանսիական համագործակցության մասին, որը զարգանում է ինչպես երկկողմ հարաբերությունների, այնպես էլ Եվրամիության շրջանակներում, այդ առումով չափազանց կարեւոր նշանակություն է հաղորդել տնտեսական հարաբերություններին, ապա եւ եզրակացրել է. «Հուսանք, որ արհեստական պատճառներով հետայսու այս ամենի խաթարմանն առիթ չի տրվի»:

Ավանա հարց է ծագում ի՞նչ պատասխան է տվել Գյուլին Դոմինիկ Վիլպենը: Թուրքական թերթերը այդ մասին լռում են: Լռում է նաեւ Թուրքիայի հանրային հեռուստատեսությունը: Սա նշանակում է, որ Ֆրանսիայի արտգործնախարարի պատասխանն ամենեւին չի զոհացրել նրանց: Ուրեմն, թուրքական հակազդեցությունը կշարունակվի:

ՀԱԿՈՐ ՉԱՔՐՅԱՆ «ԱԶԳ»

կտարվել Սարալը: Սարալը հաջորդ օրը վերադարձավ տրտուն եւ տխուր: Փաթթվեցավ մորը վզին ու լացավ. լացավ զինվոր գացած հորը համար, անչափահաս եղբայրներուն եւ քույրերուն համար, որոնք ճամփան անթաղ մնացած էին, լացավ մորը ստացած վերջին եւ իր պատվին համար: Հաջորդ օրը Սարալը գետ գնաց ջուր բերելու պատրվակով ու չվերադարձավ: Մորաքույրս իր վերջին զավակին կորուստին չդիմացավ: Մեկ օր անցած մեր ճամփա ելլալեն, ինկավ անապատին մեջ: Այի մը հող անգամ չկրցանք վրան նետել: Մեզ խումբով գետեզերքեն դեպի Շեղդետե կտանեին հեռուեն տեսանք կույտե մը բարձրացող ծուխը, երբ մոտեցանք, երկու փոքրիկ ձեռքեր տեսանք, որոնք դեռ չէին այրված: Անապատին մեջ անտեր մնացած հայ երեխաները հավաքել կայրեին»:

ՎԵՐԺԻՆԵ ՍՎԱԶԼՅԱՆ, Բանասիրական գիտությունների դոկտոր, Հայոց ցեղասպանության թանգարանի հետազոտող

ՋԵՄԱԼ ՓԱՇԱՅԻ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

(2)
ՋԵՄԱԼ ՓԱՇԱ

Սովետական հանրագիտարանի մեջ

Ջեմալ-Փաշա Ահմետ (1872-1922)-թուրքական ռեակցիոն պետական գործիչ, ազգայնական բուրժուական-կազմակերպչական «Միություն եւ Առաջդիմություն» (Երիտասարդ Թուրքերի) լիդերներից մեկը. 1913թ. ծովային մինիստր եւ Ստամբուլի զինվորական նահանգապետ, ոչ-պաշտոնական տրիումփրատի անդամ (Ենվեր-փաշա, Թալեթ-փաշա, Ջեմալ-փաշա), որը փաստորեն ղեկավարում էր Թուրքիան 1914-18 թթ. Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ եւ Թուրքիան ենթարկել էր գերմանական իմպերիալիզմին. տանում էր հետադիմական պանթուրքական քաղաքականություն: Սիրիայում հրամանատար էր (1914-18), որտեղ Արաբների եւ Հայերի զազանային ջարդեր կազմակերպեց, պատերազմում. Թուրքիայի պարտվելուց հետո. փախավ Գերմանիա (1918): 1920-ին Ռազմական հտորիդական Աֆղանստանում: 1922-ին Թիֆլիսից անցնելիս սպանվեց հայ ազգայնականի ձեռամբ:

ՄԻՎԵՏՄԱԿԱՆ ՄԵԾ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 14-րդ հատոր, 1952թ., էրես 218

Այդ երեք տղաների պատմածներից եւ այլ աղբյուրներից հետզհետե բացահայտվեցին հստորջուրի տարադրման մանրամասնությունները...

Ժողովուրդը տեղահանված է երկու սովոր խմբերով՝ սկսած 1915 Հունիսի 28-ից... Բացի այդ երկու խմբերից եղել են նաեւ փոքրիկ խմբակներ՝ արտոնյալ երկու հարուստ ընտանիքի եւ անտառներում թաքնված եւ հետազայում, աշնանը հայտնաբերված երկու տասնյակ ընտանիքից բախկացած խմբակներ... Մինչեւ երգնակ հասնելը զանգվածային կոտորածներ տեղի չեն ունեցել, թեւ հենց հստորջուրից սկսած ամեծօրյա մասնակի սպանություններն ու խժոժությունները սովորական երեւոյթ են եղել...

Բայց բռնագաղթի օրերին հստորջուրի ժողովրդի կրած անլուր սարսափների ավելի պերճախոս վկաները հանդիսացան տներին համր պատերը...

Վստահ լինելով, որ շուտով Ռուսական բանակի կողմից զրավվելու է հստորջուրը եւ իրենց պանդուխտները վերադառնալու են տուն տեղահանության վերջին պահերին շատ հստորջուրիցներ բնակարանների տախտակե պատերին գրել էին իրենց վերջին «ուղերձ-նամակները», որոնց մեջ նկարագրում էին իրենց ապրած գարիտների ողբերգությունն ու իրենց հարազատներին հատուցման ու վրիժառության կոչեր էին անում...

Օ~, այդ մերձ ի մահ գրված սրտաբուխ ու սրտաճմլիկ, անպաճույճ տողերը կարելի չէր կարդալ առանց տակումի ու արտասուքի...

Դրանք իրենց հայրենի օջախներից դաժանագույն բռնությանը տեղահանվող ու դեպի սպանող քվոդ մեր անմեղ, մեր անտեր ու անպաշտպան ժողովրդի վերջին հեկեկանքն ու հառաչանքն էին... Նրա ոգնության վերջին

կանչն ու աղաղակը... Նաեւ նրա սրբազան պատգամն ու եղանակը ուղղված իրենց հեռավոր պանդուխտ հայերին ու եղբայրներին, ամուսիններին ու զավակներին, նշանածներին ու ընկերներին վրիժառու լինելու իրենց դահիճները...

Թեւ այդ յուրատեսակ նամակները իր ժամանակին արտագրվել ու սրբությամբ պահվում են հստորջուրից պանդուխտների մոտ, սակայն այժմ հնարավոր չէրավ դրանք գտնել, որովհետեւ անհատի պաշտամունքի տարիներին մարդիկ վախից ոչնչացրել են նմանօրինակ ամեն մի թուղթ: Չէտ որ դրանք հիշեցնում էին Հայի տառապանքն ու Թուրքի ոճրագործությունը... Եվ, մանավանդ, վրիժառության ու հատուցման կոչեր էին պարունակում...

Դրանցից մնացել են միայն «Արմյանսկի Վեստնիկ» ժուռնալի 1916 թվի 25-ում լույս տեսած հայտնի գրող Ատրպետի հոդվածում մեջ բերված երիտասարդ վարպետ Մեսրոպ Թաթմանյանի տան պատերին գրվածները, որոնցից մի քանիսը նմուշի համար գետեղում են այստեղ: «10 Հունիսի, 1915 թ. հստորջուր, հանդաձոր գյուղ: Ամեն տեղ լաց ու կոծ է տիրում... Մեզ քշում են դեպի ստույգ կործանում...»

«22 Հունիսի: Թող ապագա սերունդը դատի՞ թե ինչպիսի~ ոճրագործություն է կատարում թուրք կառավարությունը մեր հանդեպ:»

«Այ, ավելվեց հստորջուրը: Այդ հարուստ շրջանը, որ գոյություն ուներ մի քանի դար՝ դատարկված է իր բնակիչներից, որոնք շարան-շարան գնում են դեպի անդունդ, 7-8 հազար հոգու քշում են դեպի մահ... Օ~, Աստված իմ, ես խենթանում եմ... Իչպեսի~ անարդարություն, ինչպիսի~ անմարդկային հալածանք...»

«Օ~, Աստված իմ, ուտր... Ինչուտ չես հայտնվում ժողովրդին օգնելու... Քո ժողովուրդը շրջապատված է վայրենի զազաններով, կատարվում են սոսկալի ոճրագործություններ. պաշտպանիր մեզ... Ռտր ես, միտք չես լսում, տեր իմ...»

«ՀԻՇԵՑԻՔ ՀԵՏ ԱՅՆԵՑԵՔ ՈՐԱԵՍ ՄԱՐԴ: ՎԱՐՎԵՑԵՔ ԹՈՒՐԹԵՐԻ ՀԵՏ ԱՅՆԵՑԵՔ ԻՆՉՊԵՆ ՆՐԱՆՔ ՎԱՐՎԵՑԻՆ ՄԵՉ ՀԵՏ:

«Մնաց բարով, մենք գնում ենք մեռնելու... Թող Աստված պատժի Թուրքերին... Պետք է վրիժառու լինել հավիտենական ոճրագործներից...»

Սիա թե ինչ են ասում համր պատերը... հստորջուրից պանդուխտներից՝ Ֆրանսուա Բորչանյանը իր տան պատերին գրվածները կարդալուց հետո գրել էր մի ցասկոտ բանաստեղծություն, որից, դժբախտաբար, հիշում են միայն վերջին երկու տողը.

Մենք չենք մոռանա այս աղետը սոսկալի, Կու գանք մի օր հատուցանել լիուլի...

Այսպիսով պանդուխտ հստորջուրցու բոլոր հույսերը ի դեպի ելան, լավատես ակնկալությունները չիրականացան եւ նա մնաց սարսափելի իրողության դեմ հանդիման անընտանիք, անհայրենիք...

Նա տեսավ, որ Թուրք կառավարության համար ոչ մի նշանակություն չունեցան իր դարավոր հավատարիմ հպատակությունն ու լոյալությունը, նաեւ իր կաթուղի լինելու հանգամանքը... Նա տեսավ, որ իր բախտը ոչնչով տարբեր չէրավ ընդհանուր Արեւմտահայության բախտից...

Նա հասկացավ եւ համոզվեց, որ Օսմանյան պետությունը դարերով հետապնդել էր Հայ ազգը բնաջնջելու, ծուլելու նպատակ սիստեմատիկ կերպով ու հետեւողականությամբ Հայերի հանդեպ տարել այդպիսի քաղաքականություն, որը միայն այժմ, պարագաների «բարեհաջող» բերումով կարողացա լիովին գլուխ բերել...

Շատ ճիշտ են ասել, ու հույսը բարոյական թթվածին է... Էլի մի փոքրիկ հույսի նշույլ կայծկլտաց պանդուխտ հստորջուրցու առաջ. յուրաքանչյուր պանդուխտ իր հոգու խորքում փայփայում էր այն հույսը, որ տարագրվածների մի մասը անշուշտ ողջ մնացած կլինի ու պատերազմից հետո կվերադառնա եւ... դրանց մեջ կլինի իր ընտանիքի զոնե մի մասը... Այդ հույսով առաջնորդվեցին մարդիկ ու շատ պանդուխտներ վերադառնալով հստորջուր սկսեցին վերաշինել հայրենիքը...

ԵՎ նորից ծուխ բարձրացավ ծխնելույզներից ու լամպը վառվեց սպիտակաշեն տներում... Բայց ոչ ոք չէր

ամուսնանում, նոր ընտանիք կազմում... Սպասում էին... Նույնիսկ ամուրի երիտասարդները չէին ամուսնանում՝ սպասում էին...

Բայց շուտով վրա հասավ երկրորդ, ամենամասպասելի աղետը:

Ռուս բանակի քաշվելուց հետո, 1918 թվի սկզբին, երբ դեռ չէին ընկած նույնիսկ Բայբութն ու Կարինը, խոտորջուրը արդեն շրջապատված էր հազարավոր թուրք անբոխով և Օսմանյան բանակի վաշտերով ու հրետանիով, որոնք ամիսներ շարունակ անդադար գրոհում էին նոտ 100 պաշարված խոտորջուրցիների վրա...

Թեև Ռուսաստանից հարյուրավոր խոտորջուրցի երիտասարդներ շտապեցին իրենց պաշարված գյուղին օգնության, սակայն ոչ Արդվինի եւ ոչ էլ Բրզոլումի կողմից հնարավոր չեղավ անցնել խոտորջուր...

Խոտորջուրում պաշարվածները ամիսներ շարունակ արյունալի մարտեր մղելով ետ էին շարտում թուրքերի հարձակումները եւ միայն այն ժամանակ, երբ վերջացան բոլոր տեսակի պաշարները եւ դրսից սպասվող օգնության հույսը բոլորովին վերացավ, երբ արդեն ընկել էին ամբողջ Արեւմտահայաստանի բոլոր գավառները եւ Օսմանյան բանակը հասել էր Ղարսի դռներին, այն ժամանակ միայն թողին խոտորջուրը...

Այդ հերոսամարտը սպասում է մի կարող գրչի, որ ի վիճակի լինի պատշաճորեն վեր հանելու հայ ժողովրդի նորագույն պատմության փառավոր էջերից մեկը եւս... Իսկ եւ այնքանը կարող եմ հաղորդել, որ այդ պանծալի հերոսներից միայն 10 հոգի բազմաթիվ ողիսական արկածներից հետո, 1919 թվի գարնանը հասան Թիֆլիս: Հետագայում դրանցից մի քանիսը մասնակցություն ունեցան Ջեմալ փաշայի սպանության գործին:

Վերջապես ավարտվեց Առաջին Համաշխարհային Պատերազմն ու դաշնակիցները հաղթական մտան Կ. Պոլիս:

Ամբողջ հայության հետ խոտորջուրցիներն էլ ցնծագին ողջունեցին հաղթությունը, հավատացած լինելով, որ վերջապես դաշնակիցները պարտված Թուրքիայի հետ արդար հաշվեհարդար կկատարեն ըստ իրենց մեծադորդ խոստումների եւ հայ ժողովուրդը կստանա համապատասխան իր 1915 թվի կոտորածներից առաջ ունեցած ազգաբնակչության քանակի՝ տերիտորիա եւ կսկսվի նրա քաղաքական վերածնունդը...

Առաջին հերթին խոտորջուրցիները Թուրքիա դրկեցին իրենց «ՏԱՅԲ» հայրենակցական միության կողմից մի լավ կազմակերպված եւ նյութական լավ ապահովված խուզարկու խումբ, փնտրելու տարագրված խոտորջուրցիների բեկորները: Այդ խմբի անդամները Կ. Պոլիս վրայով հասան Հալեպ, այնտեղից էլ Թուրքիայի ներքերը՝ մինչեւ Ռիֆա եւ Մալաթիա գնացին, շատ բեղմնավոր գործունեություն ծավալեցին, հարեմներից, քաքստոցներից, գանազան ողջերից դուրս կորցեցին, հանեցին, փրկեցին բազմաթիվ հայ կանանց ու մանուկների, սակայն ոչ մի խոտորջուրցու չգտան...

Ի վերջո, երկարատև ու համառ փնտրություններից հետո Մալաթիայի լեռներում հայտնաբերվեցին 7 խոտորջուրցիներ, որոնց խնայել էին քողերը, չէին սպանել եւ օգտագործել էին, որպես արհեստավորներ...

Պարզ է, որ դրանց հայտնի կարող էին լինել մինչեւ Մալաթիա պատահած դեպքերը միայն... Իսկ խոտորջուրցիների հետ պատահած ամենասարսափելի դեպքերը եւ վերջնական բնաջնջումը տեղի էր ունեցել հետո, Մալաթիայից հարավ...

Այսպիսով բուն խոտորջուրցի տարագրված շուրջ 7000 ժողովրդից գոնե մի մարդ ողջ չմնաց, չվերապրեց, չգտնվեց, որը տարագրության սկզբից մինչեւ վերջը, երկու քարավաններից մեկն ու մեկի հետ եղած լինելու կարողանար, որպես ակնատես պատմել ժողովրդի մահատակության մանրամասնությունները:

Հետագայում խոտորջուրի տարագրյալների վախճանի մասին բավականին ստույգ տեղեկություններ ստացվեցին գլխավորապես երեք աղբյուրներից.

- 1 - խոտորջուրցի Կառու Չախալյանից.
- 2 - Կարնեցի վերապրած կանանցից եւ
- 3 - խոտորջուրի վաղեմի անդամաճան բարեկամ, Բիզե քաղաքացի լավ, ազնիվ ու մարդասեր Արդուկլահ Մամուշ-Չաղեից:

Այդ երեք աղբյուրներն էլ հաստատում են հետեւյալը.

Օսմանյան պետությունը խոտորջուրցիների հետ վարվել է ճիշտ այնպես՝ ինչպես ամբողջ Արեւմտահայության հետ:

Այն է.

Հայ ազգաբնակչությունը ամբողջովին, առանց սեռի, դասակարգի, դավանանքի, դիրքի տարբերության տեղահան անել էլ քշել դեպի Միջագետք: Ճանապարհին կոտորել բոլոր 15 տարեկանից բարձր տղամարդկանց. իսկ մնացած երեխաներին ու կանանց քշել հարավ այնպիսի դժվարին տեղերով ու այնպիսի պայմաններում, որպեսզի նրանք այդ ճանապարհին ոչնչանան, ըստ որում բոլոր մահնեղականներին իրավունք էր վերապահվում վարվել այդ կանանց ու երեխաների հետ ըստ իրենց ցանկության ու քմահաճույքի լլկել, առեւանգել, իբրեւ հարձ կան ստրուկ պահել, նույնիսկ սպանել՝ առանց որեւէ պատասխանատվության... Իսկ այդ բոլորից հետո, եթե էլի ողջ մնացածներ լինեն ու Միջագետք հասնեն, նրանց էլ այնտեղ ոչնչացնեն...

Ցեղասպանության այս հրեշավոր ծրագիրը ամենայն դաժանությամբ ու բռնադատությամբ հարյուր առ հարյուր գործարկվել է խոտորջուրցիների երկու քարավանների վերաբերմամբ, որի հետեւանքով համարյա ոչ մի խոտորջուրցի չվերապրեց շուրջ 7000 տարագրված ժողովրդից...

Հարկ չկա այստեղ մեջբերել հիշյալ աղբյուրների հաղորդածները խոտորջուրցիների կրած անլուր սարսափների մասին. դրանք համընդհանուր են եղել բոլոր տարագիրների համար եւ հանրահայտ են արդեն: Բայց անհրաժեշտ է այստեղ մեջբերել նրանց հաղորդածներից մի քանիսը, որոնք հատկապես վերաբերվում են խոտորջուրցիներին ու բնորոշ են նրանց...

Ընդհանրապես բոլորը, որոնք եղել են տարագրված խոտորջուրցի կանանց հետ, միաբերան հաստատում են, որ տարագրությունից մինչեւ նրա վերջին պահը, այսինքն խոտորջուրցիների բնաջնջումը:

Ո՛չ մի խոտորջուրցի կին կամ աղջիկ ո՛չ մի դեպքում եւ ո՛չ մի պայմանով չի համաձայնի առեւանգման կամ կամավոր վերադր մահնեղականներին անձնատուր լինել, կամ նրանց կին դառնալով մեկընդմիջտ ազատվել գարհուրելի տանջանքներից ու մահվան վտանգից...

Բոլոր այդպիսի դեպքերում, խոտորջուրցի կինը երբ այլևս հնարավորություն չի ունեցել պաշտպանվելու եւ ազատվելու բռնացողնց, նա քաջաբար, անձնասպանությամբ վերջ է տվել իր կյանքին, որով փրկել է իր անաղարտությունն ու պատիվը...

Ե՛վ ոչ մի խոտորջուրցի մայր, ոչ մի պայմանով եւ ոչ մի պարագայի իր երեխային չի հանձնել մահնեղականներին, որպես որդեգիր կան ծառա, որով իսլամանալու գնով միայն փրկած պիտի լինել իր զավակի կյանքը...

Ջարմանալի սառնասրտությամբ նա գերադեսել է իր երեխայի մահը իսլամանալուց... Գուցե սկզբունք ունենալով այն, որ իր երեխան իսլամանալով՝ կրկնակի մեղք է գործում իր ժողովրդի ու կրոնքի հանդեպ - մեկ որ մի հայ պակասում է եւ երկրորդ՝ որ մի թուրք ավելանում է...

Ահա թե ինչպիսի նկարագրի ու սկզբունքի տեր են եղել այդ կիսագրագետ գեղջկուհիները...

Կարնեցի հայտնի դեղագործ Եղիշե Էֆենդիի կինը՝ տիկին Մանիկ Բաբայանը այն սակավաթիվ բախտավորներից մեկը եղավ, որոնց վիճակվեց վերապրել ու աշխարհին պատմել մեր ժողովրդի ահռելի եղեռնի մասին...

Տիկին Բաբայանը խոտորջուրցի տարադիրների մի խմբի հետ է եղել Երզնկայից մինչեւ Գրղ-Դեօզ ու Օսմասթ եւ ականատես է եղել նրանց վերջնական ոչնչացման:

Թուրքիայի պարտությունից հետո տիկին Բաբայանը Հալեպից մի ընդարձակ մամակով պանդուխտ խոտորջուրցիներին տեղեկացնում էր, նրանց հարագատների տարագրության մեջ կրած սարսափների ու վախճանի մասին:

Այդ ամանը անցավ խոտորջուրցիների համարյա բոլոր գաղթավայրերով: Այն կարդացվեց նաեւ թիֆլիսաբնակ պանդուխտ խոտորջուրցիների ընդհանուր ժողովում, առաջ բերելով ընդհանուր լաց ու կոծ, սուգ...

Ահա այդ նամակի մի քանի բնորոշ հատվածները. «... խոտորջուրցի տղամարդիկ առողջ ու հաղթանդամ՝ շուրջիները արհամարող (խոսքը վերաբերվում է թուրք

ժանդարմներին Ազվին), գլուխ իջեցնել չուզող, հայարտ, շքեր հազանված, կյանքերի մեծ մասը Ռուսաստանում անցկացրած, ազատ վարժաված՝ չուզեցին դիվանագետ լինել, մոտ շփում հաստատելով դիրենթ առաջնորդող ժանդարմների հետ... Ես գոնե մեկը չտեսա, որ զիճեր այդ բանին...»

«... Հոս հարկ կը համարեն, ի դիմաց կարճեցի դժբախտ կանանց, շնորհակալություններս հայտնել այն ազնիվ, ազգասեր խտորջուրցի երիտասարդներուն, որոնք իրենց կյանքը վտանգի ենթարկելով մութն մեջ օգնության հասան մեզ... Ապա թե ոչ՝ հին, այդ դժնդակ կացության մեջ թուրքերը մութն օգտվելով կոչնչացնեին մեզ և ավարի կու տային ինչքերնիս:»

«... Խտորջուրցիներու այդ մարդկանց ալ՝ Մալաթիա տանինը ըսելով խափած, տարած են Ֆրորնճուրար գյուղը, խան մը լեցուցած են ու առանձին-առանձին վրանին կողդպատած ու մեկիկ մեկիկ մորթելով գետը մետած են...»

«Սեպտեմբերի 7-ին Ֆրորնճուրար են ճամբար եկանք: Ըստ դժնդակ ճամբարներէ վեր պիտի մագլցեինք: Թերեւս մինչեւ այդ ատեն արծիվներն իսկ ոտք չէին դրած այդ դժվարին վերելքներուն մեջ... Կարճեցինք ավելի նեղություն կրեցինք քան թէ խտորջուրցիները. անոնք ամենքն ալ չարքաշ, առնացած նկարագրով կիներ էին, առանց տարիքի տարբերության: Կը տեսնեիր դեռ մանկտի, 15 տարեկան աղջիկ մը արյան քրտինքներու մեջ, իր ունեցած կանացի շնորհներուն հակառակ, ուժեղ, խոտոճ դեմքով դեռ կռնակին վրա ունի 30 օխ բեռ, բայց կառհամարեն նորեն ճամբու դժվարությունները. կը տեսնես իրմէ քանի մը քայլ անդին ուրիշ երիտասարդ հարս մը, որ թանկագին ավանդը սրտահատոր օթորոցով միասին շալակած, վրան ալ դեռ ունեցած գույքերը՝ կը քալե...»

«... Ով անհողող կամքով բարոյալից կլիներ, ձեր սուրբ հիշատակը անորտու մնաց... Եվ թող անցնելի պահեն իրենց սրտերու մեջ ձեր հեռավոր պանդուխտները...»

«... Երեւակայեցեք, որ աշխարհիկ կյանքին նվիրված կանայք երբեք չուզեցին ապրիլ գոնե իրենց հեռավորները գտնելու փափագով... Ըստ իս՝ սխալ ըմբռնում է սա... Խտորջուրցի կանայք ոչ ինքզինքն են ոչ ալ գավակնին օտար հարկի մը տակ չուզեցին տեղավորել, որովհետեւ իսլամանար պետք էր... Սա իմաստասիրական հարց մըն է, որ ապագայի խորհրդածության կը թողուն...»

Տիկին Բարբայանը հայտնելով որ բոլոր խտորջուրցի դիրները բնաջնջված են, իր նամակը այսպես է վերջանում.

«Որեմն դժբախտ հայրենակից խտորջուրցիներ, երևալիս մխիթարություն կը հայցեն ձեզի համար: Ստիպված են ճշմարտությունը հայտնել ձեր սիրելիներուն մասին, որ ի գուր տեղը չիուսաք... Անգուր ճակատագիրը դառն կերպով հարուածած է ձեզ՝ անդամալիորեն գատած անոնք ձեզմէ...»

Կառլոս Չախալյանը խտորջուրցի Միջինթաղ Գյուլագի է, բայց եղեճի ժամանակ գտնվելով Կարիմուն (սովորում էր Մխիթարյանների վարժարանում) տարադրվել է կարճեցիների 8000 հոգուց բաղկացած երկրորդ կարավանի հետ:

Նա շատ անգամներ ստույգ մահից զարմանահրաշ բախտավորությամբ փրկվելով ողջ մնացած տասնյակ այլ մարդկանց հետ հասնում է Ռաքթա...

Տարագրության ամբողջ ճանապարհին Կ.Չախալյանը ակտիվ կերպով (իհարկե, որքան կարող էին այս թույլ տալ տարագիր հայի պայմանները) հետաքրքրվել է խտորջուրցի տարագիրների վիճակով, զանազան փնտրություններ է կատարել, հույս ունենալով մի լուր տասնալ իր ծնողների եւ հայրենակիցների մասին: Ստույգ իմանալով, որ խտորջուրցիների կարավանները հասել են Ռրֆայի շրջանը, նա ձգտում է մի կերպ ընկնել այնտեղ... Ստույգ իմանալով...

Սրբուհի հաջողվում է միայն 1916 թվ. աշնանը: Նրան ու երեք ուրիշ հայ տղաների, որպես իշապանների, Ռաքթայից վերցնում են Օմար եւ Շեվքեթ ժանդարմները 150 վէր Ռրֆա տեղափոխելու համար: Ռրֆայում օգտվելով իրենց հսկող ժանդարմների անփութությունից, հայ տղաները անհետանում են քաղաքի բազմաթիվ ծուռ ու մուռ փողոցներում... Վ. Չախալյանը որպես վանեցի թուրք մուխաճի (գաղթական) ձեւանալով Ռրֆայում միառժամանակ ազատ շրջում է ու փնտրություններ կատարում...

-Մի օր հանկարծ հանդիպեցի, - պատմում է Կ.Չախալյանը, - ինձ լավ ծանոթ կարճեցի վաճառական Զալեթյան Արմենակին, որը իր ամբողջ ընտանիքով, 40 այլ ընտանիքների հետ առերես իսլամություն ընդունելով, որպես կարելու արհեստավոր փրկվել էր ու այդ ճամնակ աշխատում էր Ռրֆայում, որպես արհեստավոր: Նրա նոր անունը Ռիզա էֆենդի էր: Նա ոչ միայն ինձ չմատնեց, այլ շատ սիրով օգնեց իմ փնտրությունների մեջ: Նա հաջողացրեց իր տան մեջ, իր կնոջ՝ Աստղիկի, զորքանց Ազապիի եւ աներծակ Զակոբի ներկայությամբ, տեսակցություն ունենալ կարճեցի Փախրջու կնոջ՝ Շողակաթի հետ, որը միակ կեղծանի մնացած վկան էր այն մեծ ողբերգության, որին գոհ էին գնացել խտորջուրցի, Կարիմի եւ այլ հայկական զավառների միացյալ կարավանի վերջին բեկորները... Ըստ Կ. Չախալյանի գրավոր հուշերի, տիկին Շողակաթը պատմել է հետևյալը.

«... Սամաթի մոտերքը, երբ ալ ոչ մեկ այդ մարդ չէր մնացել մեր կարավան մեջ, առեւանգման ու բռնաբարման նպատակով հարձակումները սաստկացան... Օգտվելով մեզ պաշտպանելու պաշտոն ունեցող ժանդարմներու բարիացակամությունից՝ շրջակա մահմեդական գյուղերեն հաճախակի կու գային աղջիկ կամ դեռատի հարս քաշելու, որոնք եթե կնության կամ հարձի տեղ չէին տաներ՝ ուրեմն լլկելով տանջամահ կնեին... Բայց խտորջուրցի կիներն ու աղջիկներն անպետելի քաջությամբ ու համարձակությամբ կը դիմադրեին ու ինքզինքն կը պաշտպանեին. կը մեռնեին, բայց երբեք անձնատուր չէին ըլլար թուրքերուն:

«Բայց այդ զարհուրելի օրերուն իսկ, կը գտնուէին բարեսիրտ մահմեդականներ, որոնք մարդասիրտներէ, անգավակութենէ կամ այլ առիթ դրոված կու գային տարադիրներու մոտ խաղաղությամբ, ի հարկէ ժանդարմներու հետ պայմանավորվելով, անոնց չնչին «պաղ շիշ» մը տալով, եւ կուզեին աղջիկ մը, մանչ մը տանիլ, նույնիսկ դրան առաջարկելով մերձավորներուն: Զանաձայնիլը կը նշանակեր կյանք, ազատություն, հաց եւ վերջ դժոխային չարչարանաց... Սակայն խտորջուրցի կիներ երբեք չօգտվեց նման առաջարկներից ան մինչեւ վերջ գերադասեց մահը ուրացումէ...»

«...Իսկ ամենաբնուշն ու աննախընթացը, միեւնույն ատեն ամենասքանչելի ու սահմնկեցուցիչը կատարվեցավ մեկ անգամ լուսաբացին, երբ ավելի բազմամարդ հարձակման մը պահուն, ժանդարմները բացեիբաց ասպարեզ տվին կարավանին վրա հարձակվող գիշահիշներու ոհմակին, նույնիսկ սատարեցին անոնց... «Այդ անելանելի պահին, մեկ ալ տեսնա՞ք խտորջուրցի դեռատի կանայք ու աղջիկները, բոլոր եթեան մի քանի հարյուր հոգի միասին, կարծես ի վերուստ իջած աստվածային հրամանով, անշուշտ նախապես պայմանավորված ուխտով, մեկ անդամեն, իրար կանչելով, մեկզմեկու ձեռքեր բռնած, մայրերը իրենց մանուկները կրծքերնուն կամ կռնակին կապած թռան, սլացան, ու մեկ ակնթարթի մեջ ինքզինքն մետեցին Եփրատի ալիքներուն մեջ...»

Կ. Չախալյանը իր կողմից այսպես է խորհրդածում իր հուշերում. «Կանանց կուլեկտիվ անձնասպանության եզակի դեպք, որպիսին դեռ չի արձանագրված պատմության մեջ... Կը խորհիմ թե խտորջուրցի կանանց այս գերարդկային ուժն ու կորովը հանուն իրենց սրբազնացրած բարոյական ու հոգեկան սկզբունքներու անտարտության հաղթահարելու ամեն տեսակի մարմնական տանջանք ու զրկեաք, նույնիսկ մահը, ուսկիտց կու գա...»

«Արդյուք կրոնական նախապաշարուններից, հանդերձալ կյանքի գոյության խոր հավատքից, թետ այդ՝ հայ ցեղի բնածին կենսունակության դարավոր ակունքներից կու գար ու այդպես առատաբուխ հոսում էր մեր կանանց հզոր կամքի մեջ, բովանդակ էության մեջ եւ դրանով է, որ հայ ժողովուրդը աննված է մնացել, ապրել է ու հասել մեր իսլամավոր օրերին ու պիտի հարատեւի հավիտյանս հավիտենից»:

Միա թե ինչպիսի ընտանիքներ էին կորցրել պանդուխտ խտորջուրցիները եւ ինչու այնպես դառնաղի մորմորում էր նրանց հոգին, ինչու վրեժի գազցումով լցված էր նրանց սիրտը...

Սամաթից նրանց կարավանը քշում է դեպի ՌԻՖՖ, այնտեղից էլ դեպի աստվածաշնչական հառանք քաղաքի ուղղությամբ...

Այդ ճանապարհին նրանց կարավանը դժբախտություն է ունենում ԶԱՆԴԻՊԵՆԻՆԻ ԶԱՄԱԼ ՓԱՇԱՅԻՆ:

Այդ ժամանակը հանրակրթում է ՌԻՖՖայի հայ կանանց նշանավոր ինքնապաշտպանության ժամանակներին, որը, ինչպես հայտնի է, կատաղեցրել էր օսմանյան բանակի հրամանատարությանը: Պիտի ենթադրել, որ Ջենալը այդ առնչությամբ էլ գնում էր դեպի ՌԻՖՖ... (Ըստ տվյալների նա մի օր է եղել ՌԻՖՖայում):

- Մեր կարավանին կեցած տեղը հանկարծ երեւացավ Ջենալ փաշան իր շքախմբով, - տիկին Շողկաթի հաղորդածները այսպես է վերապատմում իր հուշերում Կ. Չախալյանը - Սուրիոյ ասածոյ, Ջենալ փաշայի երեւալով մեր կարավանի վրայով հույսի նշույլ մը սավառնեցավ... Որովհետեւ մենք լսած էինք, որ Ջենալը տարակարծիք է թալեաթի ու Էնվերի հետ եւ դեպի հայերը բարյացակամ է...

- Ինչ կասկած,- ասում է կ. Չախալյանը - որ ամբողջ Զարավային ռազմաճակատի գերագույն հրամանատարի ու դիկատատորի մի խոսքը, նրա մատի մի շարժումը կարող էր հազարավոր հայ կանանց ու մանուկներին կյանք շնորհել...:

Մի խումբ կանայք խոտորջուրցի Սարուզ Զանըմի առաջնորդությամբ ծնկաչոք դիմում են ամենագոր փաշային, աղերսելով զթալ իրենց, թույլ տալ գոնե առժամանակ մնալ այդտեղ, հանգստանալ եւ պաշտպանվել խուժանի հարձակումներից...

-Գթացք, փաշա, վերեւ Աստված, ներքեւ դուր... Գթացք, վասնզի մեր մեջ այլևս մար մարդ չկա, մնացել ենք միայն մանկտիք ու թժվառ կանայք...:

Ջենալ փաշան ձեռքով իր կարծ մորուքի հետ խաղալով աչքե կանցնե իր առջեւ բազկատարած չորացած աղաչավոր կանանց ու մանուկներին եւ սպառնազին կը գոչե.

- Օձին եգն ու ործը չըլլար... Զայ կանայք ավելի վտանգավոր են քան այրերը...- եւ ձեռքով կարավանը քշելու հրաման կարծակե...

Այնուտեստե Սարուզ Զանըմ կմախքացած բռունցքները երկակացնելով փաշայի կողմը, կանիծե ասելով.

- Փաշա~, փաշա~, քեզանից մեծ~ Աստված կա... Մեր ցավակները մեռած չեն, անոնք Ռուսիա կգտնվին, ու օր մը անոնց պատասխան հիտի տաս...- ապա դիմելով երկնքին, անհուն հուսահատության մեջ, այսպես կգոչե.

- Օ~, Տեր իմ, եթե դու կաս~ խոնարհեցու գունկն քո եւ ակն քո եւ լուր ու տես~...

Դրանից անմիջապես հետո կարավանը կրկնապատկված վայրագությամբ քշել են առաջ...

- Քրդական թթիչ գյուղը չհասած - պատմել է տիկին Շողկաթը նորեն ինձ մտտեցավ մեզ ուրեկցող երիտասարդ ժանդարման (որը միշտ բարիացակամ էր եղել մեր հանդեպ եւ ամբողջ ճանապարհին շարունակ ինձ դիմել էր, որ իմ աղջկան հոժարությամբ իրեն կնության տալ, խոստանալով փրկել նաեւ իմ կյանքը եւ միշտ էլ մերժվել էր իմ կողմից) եւ հայտնեց, որ կարավանը իր վերջին ժամերը կապրե... Որ հրամանը շատ խիստ է... Ամենքը պիտի ոչնչանան անխտիր... մեղք է, մի համառեք...

-Եւ- շարունակել է տիկին Շողկաթը- վերհիշելով կարինից մինչեւ այդտեղ մեր քաշած սարսափները եւ նայելով իմ միևուճար, գեղեցկուհի աղջկան եւ պատկերացնելով, որ վերջ ի վերջո առանց իմ համաձայնությամբ էլ աղջիկս կարող է առեվանգվել այդ ժանդարմայի կողմից կամ այլ թուրքի կողմից, անհուն ցավոք ստիպված աղա տալ իմ համաձայնությունը... Ժանդարման պահեց իր խոստումը եւ թթիչ քրդական գյուղում ինձ ու աղջկանս անկատելիորեն անջատելով կարավանեն, մի քրդի ընտանիքի մոտ պահ տվավ մեզ...

Կես գիշերը անց էր, երբ ժանդարմաները բոլորը վերադարձան թթիչ գյուղ... Ինացանք, որ մեր կարավանը ամբողջովին ոչնչացված է...

Վաղ առավոտյան, երբ եւ ու աղջիկս քրդի կոնածե իյուրակի առաջ վճացվում էինք, արեւելքից գյուղ մտան լալով ու ողբալով, արյունաշաղաղ շապիկներով 11 վիրավոր խոտորջուրցի կանայք... Ժանդարմաները այդ թշվառներին անմիջապես օղակելով դուրս քշեցին... Քիչ հետո լսվեց իրացանների պայթումները... Ո՛ր ժանդարմաները ինքնագոհ վերադարձան գյուղ: Ջենալի հրամանը լիով կատարված էր:

Կ. Չախալյանին չի հաջողվում երկար թաքնվել վանեցի մուհաճիրի անվան տակ: Եսքի շեհիրցի թրքացած Վահանը մատնում է նրան:

Բանտում Չախալյանը հանդիպում է ՌԻՖՖայի հայ կանանց հերոսական ինքնապաշտպանության հռչակավոր ղեկավար տիկին Եղիսաբեք Եռթնեղբայրյանին ու նրա երկու զինակցուհիներին, որոնց օսմանյան ռազմական դատարանը 101 տարվա բանտարկության է դատապարտված է եղել: Մի բարեհոգի հարուստ թուրք հանձն է առած եղել հոգալու հայ հերոսուհիների սնունդը մինչեւ նրանց կյանքի վերջը: ՌԻՖՖ 15 հերոսուհու էլ 101 ական տարվա վճիռ են տվել, սակայն նրանց փոխադրել են Զալեթի բանտը...

Տիկին Եղիսաբեքը եւ իր ընկերուհիները հայտնել են, որ իրենք էլ լսել են կարմիր զոգոնցավորների նահատակման մասին: Նրանց իմացածը մոտավորապես համընկնում է մեզ արդեն ծանոթ տիկին Շողկաթի հաղորդածին, այնպես որ կրկնելու կարիք չկա...

Արդուլլահ Մամուլ-Չաղեն բնիկ ռիզա քաղաքացի, ազգությամբ լազ, սկսած անցյալ դարի 90-ական թվականներից մինչեւ իր կյանքիտ վերջը նա մնաց խոտորջուրցիների անփոխարինելի, ազնիվ ու անդավանան բարեկամը: Նրա հայասիրության մասին գրել է զրվատանքով թուրք կոմունիստ գրող Սարահետտին Ալին:

Ազնիվ Մամուլ-Չաղեն նախ խոտորջուրցիների 1915 թվին ուղեկցեց ինչքան որ այդ հնարավոր եղավ, տարադրության ճանապարհին բազում օգուտներ, նյութական ու բարոյական օժանդակություն ցույց տալով մեր ժողովրդին:

Երկու անգամ նա մասնակցեց խոտորջուրցի տարադիր ժողովրդի փնտոտումներին: Առաջին անգամ նա մասնակցեց «տայք» միության խուզարկու խմբին, նրա հետ հասավ Զալեթ, սակայն արաբ հայրենասերները արգելեցին նրա գործունեությունը արաբական աշխարհում: Զայրենասերները չհավատացին, որ մի թուրք կարող է զբաղվել հայահավաքման ազնիվ գործով...

Նրանք կասկածել էին, որ Մամուլ-Չաղեն Իթթիհատ գաղտնի գործակալն է...

Երկրորդ անգամ նա իր փնտոտումները սկսեց թիֆլիսաբնակ խոտորջուրցիների նյութական օժանդակությամբ ու նրանց հանձնարարությամբ: Խոտորջուրցի պանդուխտները շատ էին ցանկանում, որ զոնե մի հոգի պատմի իրենց հարազատների նահատակման մասին, որ զոնե մի հոգի հպատակի իրենց հարազատների նահատակման մասին մանրամասնություններ՝ թե ով որտեղ եւ ինչպիսի մահով նահատակվեց...

1920 թվին Մամուլ-Չաղեն խոտորջուրցի տարադիրների հետքերով անցան Երզնկայից Կամախ, Ակն, Մալաթիա, Դերսիմ, Սամսա, ՌԻՖՖ, Թթիչ:

Լինելով մահմեդական, ունենալով նյութական բավարար միջոցներ, անվախ ու ձեռներեց Մամուլ-Չաղեն լիակատար հնարավորություն ունեցավ ժավալել լայն փնտոտումներ: Երկար ժամանակ նա խուզարկություն կատարեց հիշյալ վայրերում, մեծ գումար խոստացավ ամեն մի կարմիր զոգոնցավորի համար, սակայն նրա բոլոր ջանքերը ապարդյուն անցան... Ոչ մի խոտորջուրցի չգտնվեց:

Շատ տեղերում նրան խորհուրդ էին տվել. «Կարմիր զոգոնցավոր չփնտրեք, նրանք չկան... Մեռան, բայց անձնատուր չեղան, չիսլանացան...»:

Թթիչ գյուղից դեպի արեւելք նրան ցույց էին տվել վերջին կարավանի նահատակման վայրը, փռված բազմաթիվ գանգերով ու ոսկորներով...

Մամուլ-Չաղեի հավաքած տեղեկությունները նույնպես համընկնում են Կ.Չախալյանի եւ նյունների հաղորդածներին,այնպես որ չենք կրկնում: Նա էլ ՌԻՖՖայում լսել է Ջենալի եւ տարադիրների հանդիպման մասին, Սարուզ Զանըմի դիմումի մասին... Կանանց հավաքական ինքնասպանության մասին եւ այլն...

Այդ երկար շրջազայությունից հատու, Մամուլ-Չաղեն ընկճված սրտով, ձեռնունայն վերադառնալով Թիֆլիս իր տեսածն ու լսածը, իր տպավորությունները ամենայն մանրամասնությամբ պատմեց խոտորջուրցիներին: Նա իր զգայալուց պատմություններով պանդուխտների մեջ առաջացնում էր ոչ միայն վիշտ եւ սուգ, այլեւ բորբոքում էր վրեժի ու հատուցման զգացումները...

Պետք է չնռռանալ, որ Սամուշ-Չաղեն խտորջուրցիների մեջ վայելում էր մեծ հեղինակություն ու հարգանք: Նրա խոսքերը ընկալում էին ամենայն լրջությամբ...
-Ափսոս ծեր կանանց- կշտամբանքով ասում էր նա- դուք թողորվին արժանի չեք նրանց... Դուք տղամարդ չեք...
Օերունագարդ լաղի ուղեղում չեր տեղավորվում այն միտքը, որ մարդ հարազատների արյան վրեժը չլուծած, կարող է հանգիստ նստել Թիֆլիսում, առեսուրդ անել...
Հետաքրքիր է, որ Սամուշ-Չաղեն չեր փախցնում պատմելու նաեւ Ուրֆայի կանանց հերոսությունների մասին եւ պատմում էր մեծ պաթոսով եւ ի վերջո եզրակացնում էր.
-Ամբողջ Հայ ժողովուրդը ահա այդպես էր վարվելու...

Այլ՝ բոլորից հետո պանդուխտ խտորջուրցիների մեջ այն հաստատա համոզմունքն էր գոյացել, Չենալ փաշան ոչ միայն ընդհանրապես արեւմտահայ ժողովրդի գլխավոր դահճապետներից մեկն է եղել, այլև իրենց խտորջուրցիների տարադրված հարազատների Ուրֆա հասած բեկորների ոչնչացման ԱՆՄԻՏԱԿԱՆ ԴՄԻՐՏԵՆ Ե ՅԱՆՂԻՍԱՅԵՆ... Նրանք համոզված էին, որ եթե Չենալը չհանդիպեր խտորջուրցիների կարավանին, ուրեմն նրանք զոհն մասամբ, ողջ կմնային ու կվերադառնային...
Դրանով է բացատրվում երբեմնի անշառ ու կրավոռական թիֆլիսաբնակ խտորջուրցիների ցուցաբերած անհավատալի եռանդը, նրանց բացառիկ համարձակությունը Չենալ փաշայի սպանության կազմակերպման գործում:
Հետագայում, երբ Չենալի սպանության պարագաները հայտնի դարձան ոստիկանության եւ իսկական սպանողները հայտնվեցին՝ Հայաստանի ՆԳՄԿ-ի (Սուղդուսու) տեղակալ Վանհա Գեորգովը (որը 1922, որպես ՉակՉեկայի պատասխանատու աշխատակից բազմաթիվ անտեղի ձերբակալություններ էր կատարել եւ շատերի գործերն էր վարել եւ հետաքննություններ արել) երբ իրեն հիշեցնում էին այն ժամանակվա Չեկայի գործակալների ու աշխատակիցների լիակատար անշնորհությունն ու անճարակությունը, որի հետեւանքով միայն բոլորովին անմեղ մարդիկ տուժեցին, այսպես էր բացատրում իրենց ձախողումը Չենալի սպանողներին հայտնաբերելու գործում.

-Ուրմ մտքից կանցներ, որ այդ տարեց «փռնչիները», այդ անշառ ու թուլամորթ մարդիկ երբեւից ընդունակ կլինեն այդպիսի լուրջ եւ վտանգավոր գործի քաղաքական տեսողի կազմակերպմանը... Փաշայի սպանողներին մենք փնտրում ենք բոլորովին այլ ուղղությամբ, այլ խավարում... Իսկ Արտաշեսը ու Պետրոսը Թիֆլիսում նորեկներ էին եւ նույնիսկ չէին գրանցված... Թիֆլիսաբնակ խտորջուրցիները ընդհանրապես որպես ավանդականորեն ապաքաղաքական մարդիկ՝ մեր տեսադաշտից բոլորովին դուրս էին մնացել...
Կառլոս Չախալյանը շատ անգամներ ուղղակի մահվան հետ քսվելով վեջապես մի օր հաջողացնում է Թուրքական իշխանությունների ձեռքից միանգամ ընդմիջտ ազատվել... Նա Ռաքբայից փախչում է դեպի անապատի ներսերը, վաչկատուն բեզուկների մոտ եւ որպես արաբ, Ապուտ էլ Աճիլի անունով ապրում նրանց մեջ մինչեւ Թուրքիայի պարտությունը, որից հետո գալիս է Հալեպ, որտեղ գտնում է Տայոց Հայրենակցական միության խուզարկու խմբի անդամներին ու գրկիցներին, որոնց օժանդակությամբ՝ Կ. Պոլսի վրայով գալիս է Կովկաս:

Նա իր հուշերում գրում է.
«1919 թ. Հունիսին հասա Բաթում: Պոլիս ժամանած Անդրանիկի զինվորներից տեղեկացել էի, որ իմ մանկության ընկեր ու ազգական Արտաշես Գեորգյանը այնտեղ է ու սրտատրոփ սպասում էի հանդիպման տենչալի րոպեներին...»
«Արեւային ցերմ երեկո էր. Հենց որ նավին կայքած աստիճաններից իջա՝ գրկախառնվեցի բաթումաբնակ խտորջուրցիների հետ, որոնք ամբողջովին եկել էին ինձ դիմավորելու... Լալով փաթաթվեցի Արտաշեսին ու երկար լացից խեղդվելով չէիք կարողանում խոսել...»
«Արտաշեսի հետ «Արմենիա» հյուրանոցում ապրում էր նաեւ Քիթաբոզ Պետրոսը (Պ. Տեր Պողոսյան): Մինչեւ այսօր ոչ մեկ չկարողացանք աչք փակել... Ես մինչեւ լույս պատմեցի Հայ ժողովրդի անցած զարհուրելի դողդոթան... Մեր սուրբ ժողովրդի անցած զարհուրելի դողդոթան... Մեր սուրբ ժողովրդի մարտիրոսությունը... Ես

պատմեցի այն ամենը ինչ ինձ հայտնի էր մեր ծննդավայրի տարադրության ու նահատակության մասին, պատմեցի առանց վերապահումների ամբողջ ճշմարտությունը... Մեծ եղեռնից վերապրած առաջին դուժկանն էի ես, որ ականատես էի եղած մեր ժողովրդի աշխարհասասան ողբերգության ու ելծմ նրա մասին կենդանի խոսք էի ասում...»
«Մեր հայրենակցները մինչեւ լույս անհուն տխրությամբ, ախ ու վախով, ոմանք լացով, ոմանք ցատունալից բացականչություններով լսեցին ինձ ու ի վերջո կրկին ու կրկին հարց էին տալիս.

«- Ուրեմն ոչ ոք չկա... Ոչ ոք չվերապրեց...
«- Ոչ ոք...- ստիպված էի ասել սարսափելի ճշմարտությունը...եւ ոչ մի հույս...

«Այդպես անցավ գիշերը... Առավոտյան լուսաբացին Արտաշեսը, Պետրոսը եւ ես գնացինք ծովափը... ծովափին կանգնած լուռ նայում էինք դեպի հեռուն, դեպի ճորտի գետի կողմը, դեպի մեր ամայացած ծննդավայրի լեռները... Դեպի արյունոռուշտ Թուրքիան... Ես զգում էի Արտաշեսի ու Պետրոսի այնպիսի հոգիների տանջանքից ապրումները... Մի գիշերվա մեջ կարծես ծերացել էին նրանք, ընկճվել ու խամրել այդ վառվռուն երիտասարդները, որոնք արիության ու խիզախության սրանչելի օրինակներ էին ցույց տվել Թուրքերի դեմ մղած մարտերում... Արտաշեսը՝ Չորավար Անդրանիկի դրոշի տակ, Պետրոսը՝ պաշարված խտորջուրի ինքնապաշտպանության դիրքերում...

«Ի վերջո սկսեցին խոսել: Երկուսն էլ միեւնույն միտքն էր արտահայտում, թեւ տարբեր խոսքերով, այլ ձեւով.
«- Այտուհետեւ ապրել միմիայն մեր ժողովրդին սպանող դահճապետներից վրիժառու լինելու համար... Այլ կյանքը՝ թող հարած լինի մեզ համար...

«Բաթումից ես գնացի Թիֆլիս, որտեղ ապրում էին հարյուրավոր պանդուխտ խտորջուրցիներ: Ես եղա նրանց բոլորի մոտ եւ պատմեցի ամբողջ ճշմարտությունը նրանց հարազատների բնաջնջման մասին... Ես վերապրելով՝ իմ սրբազան միսին էի համարում հարյուր հազարավոր մեր նահատակների վերջին խոսքը. վերջին իղձը հասցնել դեռ ապրող Հարությանը...

«Ես գոհունակությամբ տեսնում էի, որ իմ անպաճույճ, բայց ճշմարիտ խոսքերը ինչպիսի ազդեցություն են թողնում հայրենակիցների վրա, ինչպիսի արդար ցասունով ու գայրուքով բռնկվում են նրանց հոգիները... Ինչպիսի վրեժխնդրության ու հատուցումի իղձով լցվում են նրանց սրտերը դեպի Հայ ճողովրդի դահճապետները՝ Էմվերը, Թալեաթը եւ, մասնավաճ, Չենալը...

«Թիֆլիսից հեիո ես շրջվեցի Կովկասի, Ուկրաինայի եւ Հարավային Ռուսաստանի բոլոր այն քաղաքները ու ավանները, որտեղ ապրում էին պանդուխտ հայրենակիցներ ու ամեն տեղ պատմեցի իմ տեսածն ու լսածը Մեծ եղեռնի մասին... Ես անդադար ու ամեն տեղ պատմեցի Թուրքերի բարբարոսությունների ու մեր ժողովրդի նահատակման մասին, պատմեցի բոլորին, բոլորին եւ հայերին եւ ուրիշ ազգերին... Ե՛վ երբ 1922թ. ամռանը վերադառնում էի Թիֆլիս, հարավում իմացա, որ Չենալը սպանված ց Թիֆլիսում: Իմ իրավանքի չափը չկար... Ես շտապեցի Թիֆլիս ու այնտեղ անհուն բերկրանքով տեղեկացա, որ այդ արյունկազակ դահճապետի անարգ գոյությանը վերջ են տվել Արտաշեսն ու Պետրոսը:

«Անհուն երախտագիտությամբ ես գրկեցի նրանց ու շնորհակալության ու փառաբանման խոսքեր ասացի նրանց...

«Այդ պահին ես այնպես կենդանի վերապրեցի մեր անտեր ու անտիրական ժողովրդի անցած հազարասարսափ Գողգոթային Կարինից մինչեւ Տեր Չոր, մինչեւ արեւակեզ անապատը անժայռածիր...

«Ո՛ր ինձ թվաց թե այդ պահին ինձ հետ են Չենալի հարյուր հազարավոր գոհերը, որոնք ես գիտեմ (եւ ականատես վկան եմ) անրժեղով Չենալին ու նրա արբանյակներին նահատակվեցին՝ մեռնող իրենց վերջին հայացքը վերջին անգամ հառելով դեպի հյուսիս որտեղից շարունակ սպասել էին փրկության ու հատուցման:

«Ինձ թվաց թե հոշոտված հարյուր հազարավոր Հայերի անթաղ ու անշիրմ ոսկորները, որ ցրվ գրիվ փռված հարավի անժայռածիր անապատների ու ավազների վրա, հատուցման այդ հրաշալի ժամին էին սպասել՝ այժմ մարմին ու արյուն առած ահա եկել ինձ հետ մեկտեղ

ողջագործվում են այդ հերոսների հետ ու շնորհակալության ջերմաքերն խոսքերը մրմնջում երկու վրեժխնդիր հայորդիներին...

(Շար. 2)

Ո՞Վ Է ՀԱՋՈՐԴԸ՝ ՍԻՐԻԱՆ

Երկրորդ համաշխարհային պատերազմից անմիջապես հետո Եվրոպայում գտնվող ամերիկյան բանակների հրամանատար, գեներալ Փաթոնը Բեռլինի արևմտյան հատվածում նստած յուրայիններին ասում էր. «Մեր

գործերն այստեղ են գտնվում, մեր հակառակորդներինը՝ նույնպես: Միեւնույնն է, մի օր մենք պատերազմելու ենք միմյանց դեմ, ուստի ավելի լավ չի լինի, եթե հիմա կռվենք, քանի բոլորս այստեղ ենք»: Պատերազմից հյուծված Եվրոպան եւ լուրջ վնասներ կրած Մ. Նահանգներն այն ժամանակ մերժեցին խենթուկի համբավ ունեցող ամերիկացի զորապետի այդ «խորհուրդը» եւ աշխարհն այնուհետեւ շուրջ 50 տարի գոյատևեց Սառը պատերազմի պայմաններում եւ առ այսօր շարունակում է գոյատևել:

Իրաքյան պատերազմի առաջին օրերին Մ. Նահանգների պաշտպանության քարտուղար Դոնալդ Ռամսֆելդի գլխավոր խորհրդական Ռիչարդ Փեռլը 58 տարի հետո գրեթե նույնությամբ կրկնում էր գեներալ Փաթոնի «խորհուրդը»: «Մեր ուժերն արդեն գտնվում են տարածաշրջանում, ճիշտ ժամանակն է լուծելու Իրանի, Սիրիայի եւ նման երկրների հարցերը»:

Այժմ Փեռլը նախկին պաշտոնում չէ, սակայն վերջին մի քանի օրերի զարգացումները ցույց են տալիս, որ Վաշինգտոնում նա սուր չէր նվազում: Բազմերը շատ են այնտեղ: Ապրիլի 10-ին պաշտպանության փոխքարտուղար Դու Վոլֆովիցն էր Կոնգրեսում նախագուշացնում Սիրիային: Հաջորդ օրը նման նախագուշացում հնչեցրեց ոմանց կողմից «ադամվի» համարվող պետքարտուղար Քոլին Փաուելը, իսկ կիրակի օրը, ամսի 13-ին, նախագահ Ջորջ Բուշն ստանձնեց գլխավոր դատախազի պարտականությունը: «Սիրիան պետք է լավ իմանա, ասաց նա, որ չի կարող այդ մարդկանց (իրաքցի լիդերների) ապաստան դառնալ»: Եվ անմիջապես, կրկին օգտվելով արդեն պատրաստ ամբաստանագրից, շարունակեց. «Սիրիան ցանգվածային ոչնչացման զենքեր ունի, ժամանակն է, որ նա համագործակցության ոգի ցույց տա»:

Երեկ շեֆից մեկ աստիճան առաջ անցավ Սպիտակ տան խոսնակ Արի Ֆլեյշերը, որը շատ ավելի հստակ մեղադրեց Դամասկոսին, վկայակոչելով CIA-ի աղբյուրները, քիմիական զենքերի ծրագիր իրականացնելու մեջ: «Այս երկրի ապագան, ասաց նա, տարբեր պետք է լինի անցյալից: Սիրիան այժմ ունի նոր, երիտասարդ նախագահ, որը պետք է մտածի, թե իր երկիրն այժմ որտեղ է գտնվում աշխարհում: Երկար ժամանակ Սիրիան մաս է կազմել ահաբեկչությունը քաջալերող երկրների ցուցակին: Ժամանակն է հանկանալու, որ իր երկիրը Միջին Արեւելքի փոփոխվող տարածաշրջանում է գտնվում»:

Երեկ հնչեց նաեւ Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Ջեյ Սթրոուի «մեղմացուցիչ» արտահայտությունը, թե ինքը վստահ չէ, թե Սիրիան ցանգվածային ոչնչացման զենքերի է տիրապետում: Սակայն, նա իր տեղակալին ուղարկեց Դամասկոս հորդորելու համագործակցել կուլիցիայի երկրների հետ: Սա «մտրակ են բխթ» քաղաքականության վառ օրինակ կարող է դառնալ:

Ո՞րն է Վաշինգտոնի նպատակը: Իրաքյան պատերազմը Սադամ Հուսեյնի հարցը լուծելուց անդին բազմաթիվ նոր հարցերի ու խնդիրների ճանապարհ է բացել, ինչպես նախատեսվում էր պատերազմից առաջ: Առնվազն երկու պետություններ Սիրիան եւ Իրանն այժմ իրենց անմիջական հարեւանության մեջ ունեն ամերիկյան հուժկու բանակները, ամենակարող օդուժը եւ նավատորմը: Այսուհանդերձ, թվում է, որ Իրանը կարող է առայժմ իրեն ավելի անվտանգ զգալ, քան Սիրիան: Քանզի նա ավելի մեծ պատահ է, եւ երկրորդ, Իրաքի ազգաբնակչության ավելի քան 60 տոկոսը հոգեւոր կեղադրվ կապված է շիիական Իրանին, եւ կուլիցիոն երկրներն այժմ խնդիր ունեն սիրաշահելու այդ

մեծամասնությանը: Մինչդեռ Սիրիան բոլոր պատճառներն ունի վերահաս վտանգն անմիջականորեն զգալու: Չէ՞ որ, դեռեւս իրաքյան պատերազմի առաջին օրերին Վաշինգտոնն ու Լոնդոնը հայտարարեցին Իսրայել-Պաղեստին հակամարտության կարգավորման իրենց ծրագրի, ավելի ճիշտ «ուղեգծի» մասին: Նախկինում նման «ուղեգծերը» միշտ էլ մերժվել են Սիրիայի կողմից, քանզի եղել են միակողմանի, միշտ ի շահ Իսրայելի պետության: Այս անգամ չի կարող տարբեր լինել: Սակայն Սիրիայի դիրքորոշումն այս անգամ պետք է տարբեր լինի, այդ է կամքը Մ. Նահանգների: Այլապես, ամերիկյան բանակն այնտեղ է, հարեւան Իրաքում:

Հ. Ա.

Շամառու ակնարկ իրանահայ գաղթօջախների պատմության

Էդ. Բաղդասարյան
(Էդ. Վերամահյ)

(9)

(Շար. Նախորդ համարից)

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔ

Իրանում հայկական առաջին հասարակական եւ քաղաքական կազմակերպություններն ու միությունները ձեւավորվել են XIX դ. ծերջին XX դ. խկզբին: Միակ ազգային քաղաքական կուսակցությունը Հայ Հեղափոխական Դաշնակցությունն է, որը ներկայումս էլ շրջափելի դեր է խաղում համայնքի հասարակական կյանքում: Երկրում գործում են 30-ից ավելի հայկական կազմակերպություններ ու միություններ, որոնց գործունեության գլխավոր առանցքը հայապահպանությունն է:

Կրթադաստիարակչական լայն գործունեություն են ծավալում «Ատրպատականի հայուհյաց բարեգործական միացյալ ընկերությունը» (1901-ից), Թեհրանի հայ կանանց բարեգործական ընկերությունը (1907-ից), «Փերիայի կրթասիրաց միությունը» (1928-ից), «Չարմահալի հայ ուսումնասիրաց միությունը» (1930-ից) եւ այլ կազմակերպություններ: Ավելի ուշ իրենց հայապահպան գործունեությունն են սկսել «Հայ Համալսարանականների միությունը» (1943), «Մշակույթ» միությունը (1944), «Հայ մշակութային Արարատ կազմակերպություն» (1944) եւ այլն:

Իսլամական հեղափոխությունից հետո ստեղծվել են «Աբուլյան» (1980) միությունը (կարճ գործունեություն է ունեցել), «Սանահին», «Սարդարապատ» (1983) միությունները, հայրենակցական, կին, գրողների, եկեղեցատերերի, բժիշկների, ճարտարապետների սիւնություններ:

ԱՏՐՊԱՍԱԿԱՆ ԻՐԱՆԻԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հիմնվել է 1901-ին Թավրիզի կականց բարեգործական ընկերության 1891, եւ Ատրպատական կանանց բարեգործական ընկերության (1895) միավորմամբ: Հիմնական նպատակն է բարեգործությունը եւ աջակցությունը Ատրպատականի հայերի կրթական գործին: 1894-97-ին լայն գործունեություն է ծավալել Վասպուրականից փախած գաղթականության ընդունելու եւ տեղավորելու, նրանց կարիքները հոգալու ուղղությամբ:

Ընկերությունն իր միջոցներով դպրոցներ եւ մանկապարտեզներ, ինչպես նաեւ արհեստանոցներ է բացել Թավրիզում, Ատրպատականի այլ վայրերում: XX դ. խկզբին ունեցել է 13 հաստատություն (մանկապարտեզ, արհեստանոց, դպրոցներ են): Հայապահպան կարեւոր գործ է կատարել հատկապես գյուղական շրջաններում, բացել դպրոցներ եւ երեխաներին մայրենի լեզվով կրթություն ստանալու հնարավորություն ընձեռնել: Կազմակերպության հիմնադիրներից եւ աչքի ընկնող գործիչներից էին

Իսկուհի Հակոբյանը, Շուշանիկ Սալինջյանը, Մարիամ Նազարբեգյանը, Մաթենիկ Մատինյանը, Ամատունին (Մայրիկ) և ուրիշներ: Ընկերությունը ներկայումս չի գործում:

ԹԵՐՐԱՆԻ ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Հիմնվել է 1905-ին: Կազմում կոչվել է «Կարմիր խաչ»: Գործունեությունը շարունակվել է մինչև 1921-ը: Ներկայիս անունով վերաստեղծվել է 1930-ին: Նպատակը հանրային բարեգործությունն է: Ընկերությունը ստեղծել է հատուկ հիմնադրամ: Նրա ջանքերով է հիմնադրվել մայրաքաղաքի առաջին մանկապարտեզը: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին մեծ օգնություն է ցույց տվել հայ զաղթականներին ու որբերին: 1936-ին, հայկական դպրոցների փակումից հետո, հայերեն մասնավոր դասընթացներ է բացել Թեհրանում և այլ քաղաքներում: Ներկայումս շարունակվում է իր գործունեությունը:

ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԻՈՒՅՈՒՆ (ՀՕՍ)
Ատրպատականի մասնաճյուղ, բարեսիրական կազմակերպություն: 1915-ին Թավրիզում հիմնվել է «Ատրպատականի կարմիր խաչ» միությունը, որը նպատակն է ունեցել աջակցել պատերազմի ժամանակ փրկված հայ զինվորներին, իսկ պատերազմից հետո զաղթականներին իրենց բնակավայրում հաստատվելուն: 1926-ից միացել է ԱՄՆ-ի «Հայ կարմիր խաչ» կենտրոնի հետ և դարձել նրա մասնաճյուղը: 1944-ին «Հայ կարմիր խաչը» վերանվանվել է «Հայ օգնության միություն»: Ատրպատականի մասնաճյուղը եւս վերցրել է այդ անվանումը:
Միությունը լայն գործունեություն է ծավալել 1930-ին Սարմաստի երկրաշարժից տուժած հայությանը օգնելու ուղղությամբ: 1936-ին, հայկական դպրոցների փակումից հետո, հայ մանուկների համար կազմակերպել է մայրենի լեզվի դասընթացներ: 1947-48-ին հիմնել է մանկապարտեզ և 4 ժամյա դպրոց: Մինչև Ատրպատականի հայկական դպրոցների վերաբացումը (1956) զբաղվել է կրթական, բարեգործական աշխատանքներով: 1941-46-ին հազուստեղեն ևս դրամ է ուղղարկել Հայաստան:
Միության հիմնադիրներից եւ ակտիվ գործիչներից էին Հեդիմե Հակոբյանը, Աստղիկ Աթանոսյանը, Աստղիկ Հակոբյանը, Մարի Մաթեուսյանը, Սրբուհի Սեթխանյանը և ուրիշներ:
1960-ական թթ. Թավրիզի մասնաճյուղի անդամների թիվը 86 էր, վարչությունը բաղկացած էր 7 հոգուց: Ռեզայեի (Ուրմիայի) մասնաճյուղն ուներ 48 անդամ:

ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ԳՈՐԻԹՅԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ
Հիմնվել է 1915-ին Նոր Ջուղայում, գործում է ցայսօր: Մինչև 1932-ը կոչվել է «Կարմիր խաչ»: Նպատակն էր օգնել չքավոր և անօգնական ընտանիքներին, հիվանդներին, որբերին, պատերազմից տուժած զինվորներին և նրանց ընտանիքներին, ինչպես նաև համագործակցել նման նպատակներ ունեցող հայկական և տեղական մյուս կազմակերպությանը: Միությունը ղեկավարում է 2 տարի ժամկետով ընտրված վարչությունը: 1960-ական թթ. ունեցել է 46 անդամ: 1970-ին Նոր Ջուղայում բաժնվել է միության ծերանոցը:

ՓԵՐԻԱՅԻ ԿՐԹԱՍԻՐԱՑ ՄԻՈՒԹՅՈՒՆ
Հիմնվել է 1928-ին փերիայի ջուղայաբնակ երիտասարդների նախաձեռնությամբ: Նպատակն էր օժանդակել Փերիայի գավառի հայաբնակ գյուղերի բնակչության կրթական մտավոր և բարոյական զարգացման գործին, նյութապես և բարոյապես աջակցել տեղի հայ դպրոցներին, քաջալերել այլ նպատակին ուղղված բոլոր ձեռնարկումները: Միությունը գավառի Նամակետտ, Դարդուն, Խոյզան, Բոլորան, Բժկերտ, Հադան և Հազարջրի գյուղերում ունեցել է մասնաճյուղեր, որոնք գոյատևել են մինչև 1950-ական թթ. իսկ Նամակետտի մասնաճյուղը գործել է ավելի երկար:

ՉԱՐՄԱՅԱԼԻ ՀԱՅ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐԱՑ ՄԻՈՒԹՅՈՒՆ
Հիմնվել է 1930-ին Աբադանում՝ չարմահացիների Մարտիրոս Մկրտումյանի, Սիմոն Իսրայելյանի, Մնացական Մաղաթյանի, Մելքոն Իսրայելյանի, Սիմոն

Ավետիսյանի և Սարգիս Մաղաթյանի նախաձեռնությամբ: 1965-ից գործում է ներկայիս անունով: Նպատակն է աջակցել հայ մատաղ սերնդի կրթադաստիարակական գործին, նյութապես և բարոյապես օժանդակել հայ ազգային դպրոցներին, ինչպես նաև շնորհալի հայ ուսաղներին: Մինչև 1963-ը միության կենտրոնը գտնվել է Աբադանում, այնուհետև ենթարկվել է Թեհրանի մասնաճյուղին (ստեղծվել էր 1943-ին): Միությունն ունեցել է մոտ 600 անդամ՝ Անվազի, Աղաջարիի, Բանդար Մաշհուրի, ԳյազէՍարանի, Անդիմեշքի, Համադանի, Բանդար Շահփուրի և Թեհրանի իր մասնաճյուղերում:

1967-ին թեհրանաբնակ չարմահացիների ուժերով քաղաքի հս. թաղամասերից մեկում կառուցվել է Մշակույթի տուն, որն ունի ընդարձակ սրահ՝ 600 հանդիսատեսի համար, մարզադահլիճ և հարակից սենյակներ:

ՀԱՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅՈՒՆ (ՀԲԱ)
Թեհրանի մասնաճյուղ
Հիմնվել է 1924-ին: Գլխավոր նպատակն էր՝ նյութական օգնություն կազմակերպել չքավոր իրանահայերին, աջակցել երիտասարդ սերնդի հայեցի կրթության և դաստիարակության գործին, խարխուսել այլ նպատակին ուղղված բոլոր միջոցառումները: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին (1939-45) զբաղի օգնություն է ցուցաբերել զոլիած զինվորների երեսներին, իսկ 1946-ի գանգվածային հայրենադարձության ընդհատումից հետո Թեհրանում մնացած կարիքավոր հայերին: Մասնաճյուղին կից գործում է կանանց հանձնախումբ:

ՀԱՅ ԿԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ
Հիմնվել է 1939-ին Թեհրանում: Ստեղծման հիմնական առիթը հայկական դպրոցների փակումն էր (1936): Միության անդամները մանուկ սերնդին զաղտնի ուսուցանել են մայրենի լեզու, զբաղվել ինքնազարգացմամբ, ծառայել հայ դպրությանն ու մշակույթին: 1946-ի հայրենադարձության ընդհատման հետևանքով գավառներից Թեհրան եկած հայերի համար միությունը կազմակերպել է ուսումնական պարապմունքներ, ստանձնել «Արաքս» թաղամասային դպրոցին օժանդակելու պարտականությունը: Կազմակերպել է մի շարք ցուցահանդեսներ՝ «Հայ կանանց ձեռնարկեստները» «Հայ կանանց պատմական տարազները»: Միության բարոյական և նյութական օժանդակությամբ «Անի» (1980) «Արմենուհի» (1974) և «Անահիտ» քույր միությունները:

ՉԱՐՄԱՅԱԼԻ ՀԱՅ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ
Հիմնվել է 1941-ին ջուղայաբնակ չարմահացիների նախաձեռնությամբ: Գլխավոր նպատակը գավառի հայության բժշկական սպասարկումը կազմակերպելն էր: Մամուռան գյուղում ունեցել է հիվանդանոց-բուժարան, որը միակն էր ամբողջ գավառում: Գավառի ամենահեռավոր գյուղերից այստեղ բուժվելու են եկել ոչ միայն հայեր, այլև պարսիկներ: Հիվանդանոցի բժիշկները պարբերաբար այցելել են գավառի գյուղերը և տեղում բժշկական օգնություն կազմակերպել: Հիմնադրամն օրվանից միությունը ստացել է Չարմահալի ուսումնասիրաց միության օժանդակությունը: 1946 թ. դադարել է աշխատանքը:

ՓԵՐԻԱՅԻ ՀԱՅՈՑ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
Հիմնվել է 1942-ին Ջուղայում բնակվող մի խումբ կերիացի երիտասարդների նախաձեռնությամբ: Նպատակն էր՝ գավառի կենտրոնական գյուղերից մեկում հիմնել հիվանդանոց, բժիշկների միջոցով պարբերաբար կազմակերպել դասախոսություններ և բժշկական խորհուրդներով օգնել բնակչությանը, տարբեր վայրերում հիմնել մասնաճյուղեր և խրախուսել գործին նպաստող բոլոր նախաձեռնությունները: Հայաշատ վայրերում կատարված հանգանակության շնորհիվ 1942-ին գավառի ամենամեծ գյուղում՝ նամակետտում, կառուցվել է 12 մահճակալ ունեցող հիվանդանոց և ղեկավարում: Հիվանդանոցը սպասարկել է գավառի ոչ միայն հայ բնակչությանը, այլև պարսիկներին:

ՀԱՅ ՀԱՍՏԱՍԱՐԱՆԱԿԱՆԿԱՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ
Հիմնվել է 1943-ին Թեհրանում: Անդամների ճնշող մեծամասնությունը ուսանողներ էին: Միության աշխատանքները կազմակերպվում են մասնագիտական բաժանմունքների (մարզական, գրական, ճարտարապետական, արվեստի, հայոց պատմության, բժշկական) միջոցով: Ունի կենտրոնական հանձնախումբ, հրատարակչական բաժին և գրադարան: Պարբերաբար կազմակերպել է համայնքի արվեստագետների աշխատանքների ցուցահանդեսներ և միջնակարգ դպրոցների ավարտական քննությունների դասընթացներ: Միության գործունեությունը աշխուժացել է իսլամական հեղափոխությունից հետո: Ամենամյա են դարձել միության կենտրոնատեղիում կազմակերպվող աշակերտների նկարչական ցուցահանդեսները: Բացվել է խորհրդ. Հայաստանի տեսարժան վայրերին և պատմաճարտարապետական կոթողներին նվիրված լուսանկարների ցուցահանդես: Ներկայումս միությունը թեհրանահայության ամենագործուն կազմակերպություններից մեկն է:

ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ «ԱՐԱՐԱՏ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (ՀՄԱԿ)

1944 թ. հիմնվել է հայ մշակութային «Մշակույթ» միությունը: 1950 թ. հետեյալ չորս միությունների «Հայ երիտ. Մշակութային Միություն», «Միտք ու Արվեստ Ընկերակցություն», «Իրանահայ Մշակութային Միություն» և «Հայրենիք» մշակութային բեկորներից կազմվել է «Հայ Մշակութային Արարատ Կազմակերպություն»-ը: Կազմված է մի քանի միություններից սկաուտական, մարզական, արվեստի (ստեղծվել է 1974-ին երաժշտական, թատերական և գրական միությունների միավորմամբ) և երեցների: Սկաուտական միությունը (հիմնվել է 1951-ին) Կատարում է սկաուտական, կազմակերպչական և ազգային հարցերին վերաբերող աշխատանքներ: Մարզական միությունը ստեղծվել է ՀՄԱԿ-ի հիմնադրումից անմիջապես հետո և պետության կողմից ճանաչվել որպես «Արարատ» մարզական ակումբ: Ունի վոլեյբոլի, բասկետգոլի, սեղանի թենիսի, մարմնամարզության, թեթև ատլետիկայի և լեռնագագնացների խմբեր, իսկ 1961-ից Ֆուտբոլային թիմ: 1964-ից ամեն տարի կազմակերպվում են իրանի համահայկական մրցումներ, որոնց մասնակցում են Թեհրանի մյուս հայաշատ կենտրոնների շուրջ 1500 մարզիկներ: 1972-ին միությունը կազմակերպել է մրցումներ Թեհրանի հայկական դպրոցների աշակերտների մասնակցությամբ: 1974-ին Թեհրանում շահագործման է հանձնվել «Արարատ» մարզականը, որը եզակի երեւոյթ է սփյուռքահայ գաղթօջախների կյանքում: Ունի Ֆուտբոլի դաշտ (10 հզ. հանդիսատեսի համար) թեթև ատլետիկային համար անհրաժեշտ հարմարություններով, լողավազաններ, թենիսի խաղադաշտ, 600 հանդիսատեսի համար նախատեսված բասկետգոլի և վոլեյբոլի խաղահրապարակներ, ինչպես նաև մշակութային կենտրոն:

Միության գրական բաժանմունքը զբաղվում է իր անդամների հնքնագաղթացմամբ, դասախոսություններով, հրատարակչական աշխատանքով: Երաժշտական բաժանմունքում գործում են 30-ից մինչև 120 անդամ ունեցող երգչախմբեր: Թատերական բաժանմունքի ուժերով կազմակերպվել են բազմաթիվ ներկայացումներ: Կազմակերպության նախկին անդամներին համախմբելու նպատակով 1964-ին ստեղծվել է Երեցների միություն: ՀՄԱԿ-ը մասնաճյուղեր ունի Թավրիզ, Ռոմիս, Գյարդաբադ (գյուղ Ուրմիայի մոտակայքում) Շիրազ և Մաշհադ քաղաքներում:

ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ
Հիմնվել է 1944-ի մայիսի 1-ին Թեհրանում մի խումբ իրանահայ մտավորականների նախաձեռնությամբ: Նպատակն էր մասսայականացնել ժամանակակից մշակույթը (հատկապես հայկական), նպաստել հայ-իրանական կապերի զարգացմանը և մշակութային համագործակցությանը: Ունի երաժշտական, թատերական և մարզական բաժանմունքներ, գրադարան-ընթերցարան: Կազմակերպվել է հայերեն, պարսկերեն, անգլերեն, ռուսերեն լեզուներին դասընթացներ: Միությունը լայն գործունեություն է

ծավալել հատկապես ՀԽՍՀ-ում՝ Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և մշակութային կապերի հայկական քնկերության (1944) և սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի (1964) հիմնադրումից հետո: 1945-46-ին նրա նախաձեռնությամբ Թեհրանում գործող երիտասարդական միությունները միավորվել են: Թեհրանի «ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐԱՏ ՄԻՈՒԹՅՈՒՆ»
Հիմնադրվել է Հոկտեմբերի Գասպարյանի, Միքայել Մարգարեանի և Կարապետ Բազիրկանյանի ջանքերով 1870 թ.:

ՀԱՅՈՒՆԻՍՏՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Թեհրանում առաջին հայ կանանց կազմակերպություն, հիմն. 1871 թ.:

ՀԱՅ ԹԱՏԵՐԱՍԻՐԱՏ ՄԻՈՒԹՅՈՒՆ
Հիմն. 1881 թ. որտեղ բեմ է բարձրացել անվանի լեզվաբան Հր. Աճառյանը:

Թեհրանի ԱՉԳԱՅԻՆ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐԱՏ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Հիմն. 1891 թ.:

ԿԱՊՈՒՅՏ ՄԻՈՒԹՅՈՒՆ
Հիմնվել է Մարգար Դարբեգյանի (Դե) և Հայկ Գարգաշի ջանքերով, 1920 ական թթ. Թեհրանում:

ՀԱՅ ՀԱՍՏԱՍԱՐԱՆԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ (ՀԱՅՈՑ ՍԿՈՒՄԲ)
Հիմնվել է 1918 թ. Թեհրանում, ունի համերգային դահլիճ. հանգստի սենյակներ, խաղասրահներ և այլ հարմարություններ:

ԻՐԱՆԱՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
Հիմն. 1962 թ. Թեհրանում:

ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԽԱՉ
Թեհրան 1925 թ.:

Թեհրանի ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ԵԿԵՂԵՑԱՍԵՐ ՄԻՈՒԹՅՈՒՆ
Թեհրան 1927. թ:

ԳԱՐՈՒՆ ՍԿՈՒՄԲ
Հիմն. 1957 թ. Թեհրանում մի խումբ հայ երիտասարդների ջանքերով:

ՇԱՀԱՅԻՉ ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ
Հիմնվել է 1962 թ. Թեհրանի Հեշմաթեթ թաղամասում:

ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ
Հիմնվել է 1964 թ. Թեհրանի Նարմաք-Չարբեշ թաղամասում:

ԱՐՓԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ
Թեհրանի Մաջիդիեթ թաղամասի «Արարատ» դպրոցի շրջափակում, 1968 թ.:

ՀԱՅ ՄԱՅՐ ՄԻՈՒԹՅՈՒՆ
Հիմն. 1973 թ. Թեհրանի Մաջիդիեթ թաղամասում, նպատակ ունենայով բարձրացնել թաղամասի մայրերի մտավոր անկարողակը:

ԻՐԱՆԱՀԱՅ ԱՉԳԱՅԻՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ
Հիմն. 1979 թ. թեժ աշխատանքներ է կատարել, նրա կենտրոնատեղիում հաճախ տեղի են ունեցել դասախոսություններ, գրական-գեղարվեստական ծրագրեր և այլն: 1979-1986 թթ. նախագահել է իրանահայ անվանի բանաստեղծ Գալուստ Խանենցը:

ԱՐԷՍ ՄԻՈՒԹՅՈՒՆ
Թեհրանի Նարմաք թաղամաս, հիմն. 1979 թ.

ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ ՍԱՆԱՀԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ
Թեհրանի Վահիդիեթ թաղամաս, հիմն. 1979 թ. ուներ գրադարան, թատերախումբ, գրական բաժանմունք: Այժմ դադարել է աշխատանքը:

ՀԱՅ ԲԺԻՇԿԱՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
Թեհրան, հիմն. 1980

ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ ՍԱՐԴԱՐԱՊՍ ՄԻՈՒԹՅՈՒՆ
Թեհրանի Հեշմաթեթ թաղամասում, հիմն. 1983

ԱՐՄԵՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ
Թեհրան

ՀՐԱԶԴԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ
Թեհրան

ԷՐԵՐՈՒՆԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
Թեհրան, հիմն. 1979

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ
Թեհրան, հիմն. 1986

ՀԱՅ ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ ՐԱՖՖԻ ՀԱՍՏԱԻՐ
Հիմն. 1979 թ. Թեհրանի Նարմաք թաղամասում:

ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ԱՂԲԱՏԱՑ ԱՐԿՂ (1858)
Ե.Ջ.Գ.Կ.ԱՐ.ՄԻՈՒԹՅՈՒՆ (1892)
Ե.Չ.ՄԱՅՐԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ (1918)
Ե.Ջ.ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ (1962)
Ե.Չ.ՀԱՅ ՍԿՈՒՄԲ (1932)

Ե.Ջ. ՀՈՒՍԵՓ ՊՈՂՈՍԻՄԱՆՅԱՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ (1904)

(Շար. 9)

ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 75 ԵՒ ԳՐԱԿԱՆ, ԳԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅԱՆ 55 ԱՄՅԱԿՆԵՐԸ ՆԵՎԵՑԻՆ ՀԱԼԵՊՈՒՄ

Սփյուռքահայ գրող, հասարակական գործիչ Թորոս Թորանյանի ծննդյան 75 եւ գրական, հասարակական գործունեության 55 ամյակները շուրջով եւ հանդիսությամբ նշվեց ՉԲԸՍԿի Հայկաի «Նազարեան» սրահում, տեղեկանում ենք «Նոր օր» շաբաթաթերթից: Թ. Թորանյանը ծնվել է 1928 թ. Հայկաի Տավուտիե անայի, գրեթե աննարդաբնակ արվածանում կենցաղային, դաժան պայմաններում, բայց հայրենասեր միջավայրում:

Մինչ հորեյանական հանդիսությունը, ՉԲԸԿի մշակութային հանձնախումբը շրջաբերականներով եւ մամուլի միջոցով դիմել էր հալեպահայ կրոնապետներին, մշակութային կազմակերպություններին, Հայաստանի գրողների միությանը, որ իրենց ողջույնը եւ գնահատանքը բերեց հորեյարին: ՉԲԸԿի նախաձեռնությունը պսակվեց հաջողությամբ, ստացված բոլոր արձագանքները ջերմ էին եւ շատ դրական: Բոլոր նամակները եւ գրությունները ամփոփվեցին 60 էջից բաղկացած հատորակում բովանդակելով նաեւ Թորանյանի «Քարե, Հայրիկ» արձակ գործը եւ մի քանի գողտրիկ քերթվածքներ: Գրքույկը լույս է ընծայել «Կիլիկիա» հրատարակչատունը: Հորեյանական հանդիսությանը մեծարժան ելույթով հանդես եկավ հրապարակագիր եւ հրապարակախոս ժիրայր Դանիելյանը Բեյրութից՝ հակիրճ եւ բովանդակալից ներկայացնելով Թորանյան գրողին: Լազար Նաջարյան դպրոցի տնօրեն Հակոբ Միքայելյանը խոսեց Թորանյան հասարակական գործիչ մասին: Ճաշակով ու զեղեցիկ էր նաեւ գեղարվեստական հայտագիրը: Թանար հապայախն ու Հարութ Վարդանյանը հանդես եկան հորեյարի արձակ եւ բանաստեղծական գործերի ներկայացումով, որ ուղեկցվեց երաժշտական կատարումներով (Վարինե Քարանյան, Սեւան Սեներճյան, Հովհաննես Սուպայետ, Ջորջ Հայրապետյան, Նանոր Միքայելյան, Նանսի Ռաթելեյանյան, Շահե Քեշիշյան): Հանդիսության ավարտին Թորոս Թորանյանն ընդգծված հուզմունքով իր շնորհակալական խոսքերն ուղղեց ներկայներին մեծարժան եւ գնահատանքի համար: Գրողը հիշեց իր Տարտ տարեդարձը, երբ Տավուտիե իրենց խճուկ տան մեջ նշել են իր ծննդյան օրը հոր բերած 5 մարիւղներով: Այն եւ գրողին շնորհավորանքի խոսքեր հիշեցին թեմական առաջնորդ Սուրեն արք. Քաթարոյանը, ՉԲԸԿի Միքայի շրջանային հանձնաժողովի ատենապետ դոկտ. Պետրոս Բոյաջյանը եւ ՉԲԸԿի քերթվածքային գործադիր մարմնի ատենապետ դոկտ. Մանուել Վարժապետյանը, որ այս առիթով պատրաստած հատուկ հուշանվեր հանձնեց Թորոս Թորանյանին:

Ս. Ս.

Մայիսի հայկական տոները
Համադրեց էդ. Գերմանիկ

ՀԱՄԲԱՐՉԱՄՆ ՏՈՒ

Անցյալում յուրաքանչյուր տոնակատարություն իր որոշակի իմաստն ու բովանդակությունն ուներ՝ իր ժամանակը, նշանակությունն ու բուրմունքը: Կրոնական ուղղվածության հետ միաժամանակ, այդ տոները նաեւ համապատասխանում էին բնության երեւույթներին եւ այս առումով շատ իրական էին ու կենսունակ: Պատահական չէ, որ այդ ծիսակատարությունները մինչեւ օրս էլ սիրով են նշվում ժողովրդական լայն շրջաններում: Այդպիսի զեղեցիկ նշանակությամբ է առանձնանում Համբարձման տոնը: Դա բարի ավետիսի, ուրախության, բնության զարթոնքի, ծառ ու ծաղկի փթթման հիշատակի օր է: Համբարձման տոնի կրոնական բացատրությունը կապված է Քրիստոսի հոգեւոր վերակենդանացման եւ երկինք համբարձման հետ: Քրիստոսը Չիթենյաց լեռան վրա՝ Ս. Վերնատանը հանդիպում է Առաքյալներին, ուշադրությանը լսում է նրանց, իրենց անելիքների վերաբերյալ պատկերներ է տալիս, օրհնում է բոլորին եւ Առաքյալների ապշահար աջքերի առաջ, համբարձվում է երկինք: Հանկարծ երեւում է մի լուսավոր ամպիկ, որի ետևում ծածկվում է Մեծ Նվիրյալի հոգին եւ հավերժ անհետանում է Առաքյալների տեսողությունից: Քրիստոսը երկնքում իր արժանի տեղն է գրավում եւ նստում է Աստծո աջ կողմում: Այդ օրվա հիշատակը հարգելու նպատակով Չիթենյաց լեռն այնուհետեւ սկսվում է կոչվել Համբարձման լեռ: Այնուհետեւ հրեշտակները երեւում են երկնքում եւ Սուրբ Առաքյալների հայտնում են ուրախալի ավետիսը: Քրիստոսի հոգին փայլուն լույսի նմանությամբ կրկին վերադառնում է երկիր, որպեսզի իր սուրբ շնչով վերաիմաստավորի կյանքը՝ բնակություն հաստատի

բնության յուրաքանչյուր հյուլեի, յուրաքանչյուր կենդանի արարածի մեջ եւ մարդկային իրագիներում: Այսպիսով Քրիստոսը պատարագվելով բաշխվում է մեր մեջ: Այդ իսկ պատճառով բնությունը նույնպես ցնծություն է ապրում, վերակենդանանում է, հաղթանակով է դուրս գալիս մեռած ուժերի դեմ, հաստատում է իր հավերժ խորհուրդը. ամեն ինչ ծաղկում է, լուսավորվում, նոր իմաստով հաստատվում:

Համբարձման տոնը շարժական է, նշվում է Ս. Ջատիկից 40 օր հետո, հինգշաբթի: Դա լավատեսական, երիտասարդական տոն է՝ առավելապես վերապահված է ջախել աղջիկներին, նորահարսներին: Կրոնական արարողություններին միացել են նաեւ ժողովրդական տոնախմբությունները, որոնք նոր իմաստ են հաղորդել այդ տոնին: Այժմ այդ օրը հաճախ կոչվում է ծաղկի տոն, որտեղ մեծ տեղ է վերապահված վարդի գովերգությանը: Երիտասարդ աղջիկները, խայտաբղետ, վառ հագուստներով, մասնավորապես, կարմիր ու կանաչ գույներով, բնության գրկում զբոսաբներ են կազմակերպում, որի ընթացքում հնչում են ջան կազմումները, վիճակ բացելու արարողություններին հաջորդող երգերը: Բախտագուշակության ժամանակ հնչում է ժողովրդական երգ ու երաժշտությունը, քանչևկներ են արտասանում, խմբակային պարեր կատարում: Աղջիկները հավաքում են տարբեր տեսակի գույնզգույն ծաղիկներ, պսակներ են հյուսում, ծաղկեփնջեր կապում: Տեղի են ունենում ծառ ու ծաղկի եւ բնության բանաստեղծական զովաբանություն: Հովի.Թումանյանի պատկերավոր նկարագրությամբ Համբարձման առավտոր անբողջանում է ժողովրդական ծիսակատարության զեղեցիկ նկարագրությամբ:

Համբարձումն եկավ, ծաղկունքը այվան, Չուզել են հանդերը նախշուն գորգերով: Փունջ-փունջ աղջիկներ սարերը էլան Վիճակ հանելու աշխույժ երգերով:

Տոնը սկսվում է զարգանալ Համբարձման նախընթաց օրվա ժամանակ: Աղջիկները դաշտ են գնում եւ այնտեղից բերում են խայտաբղետ ծաղիկներ: Բազմերանգ փնջեր կապելուց հետո, հյուսում են նաեւ մեծ խաչածե պսակ՝ ծաղկաներով: Այնուհետեւ մի մեծ ջրամանի մեջ զցում են իրենց նշանները՝ որը մի կոճակ, որը մատնոց կամ մատանի եւ դրանց հետ միասին իր ընտրած ծաղկատեսակը: Հաջորդ օրը՝ Համբարձման տոնին, ջախել աղջիկները բոլորակ են կազմում, իրենց առջեւ դնում են համապատասխան ծաղիկներից կազմված փնջերը եւ սկսվում է վիճակահանությունը «ջան գյուլումը»:

Վիճակ, վիճակ, Օսկի կոճակ Վարդ, մանուշակ Բարի գուշակ...

Մի փոքրիկ աղջնակի կարմիր կանաչ զգեստներ են հագցնում, երեսը քողով ծածկում էին: Նա ջրամանից հանում էր այս կամ այն իրը. բախտագուշակի արարողությունն ուղեկցվում էր երգերով ու արտասանություններով: Աղջիկները բաժանվում են երկու խմբի, մի մասը վիճակին համապատասխան, հանապարաստի, հորինում էր գուշակ-քառյակը, իսկ աղջիկների մյուս խումբը պատասխանում էր. «Ջան գյուլում, ջան, ջան...»: Անցյալում վիճակահանությունը վերջացնելուց հետո, աղջիկների միջեւ բաժանվում էին ծաղկեփնջերը, իսկ կենտրոնում դրված ծաղկաները հանդիսավորաբար նվիրում էին իրենց եկեղեցուն: Այդ օրը, ըստ ավանդական սովորության, շատերը մեկնում էին Ծաղկավանք, որտեղ կատարվում էր «Ջան գյուլումի» շքեղ տոնակատարությունը, տրվում էր Ս. Պատարագ եւ տեղի էին ունենում ըստ կարգի կրոնական ծիսակատարություններ: Ծաղկավանքը գտնվում է Քասախ գետի ափին, Արա լեռան մոտ, այրտեղ էր գտնվում նաեւ Վարվառե սուրբ կույսի զերեգմանը, որին իրենց հարգանքի եւ հիշատակի տուրքն էին մատուցում երիտասարդ աղջիկներն ու տիկիները: Ս. Ջատիկից մինչեւ Համբարձման տոնը, Հայաստանի ողջ տարածքում, որպեսզի կովերի կաթը չպակասի, չէին օգտագործում կաթնամթերք՝ կաթ, կարագ, պանիր,

կաթնասեր: Համբարծման տոնից սկսած այդ արգելքը վերանում է, հիմնական ծիսական կերակուրը դա կաթնապուրն է: Այդ օրը բոլոր տներում կաթնապուրն էին եփում եւ հյուրասիրում էին տնեցիներին, հարեւաններին ու հարազատներին: Պատրաստում էին թարմ պանիր, խնոցիով հարուն էին կարագ, իսկ կաթնասերը, կաթն ու մածուկը դառնում էր այդ շրջանում հիմնական սննդամթերքը: Միաժամանակ օգտագործում էին նաեւ սարերից ու դաշտերից հավաքած վայրի, բայց ուտելի կանաչատեսակները: 2^ե որ գարնանը մարդիկ պահանջ էին զգում թարմ եւ օգտակար սննդամթերքի:

Աշխարհում ինչի՞ համար են սիրում հայերին
Ս. ԽՅԱՆՂԱՆՅԱՆ, Գ. ՎՃՏՆԵՅԱՆ

56. Հայ բանաստեղծը հարազատ զավակն է մի ժողովրդի, որի կյանքի պատմությունը ցավի, տանջանքի, արյան ու տառապանքի դիրք է: Մի ժողովուրդ, որի կյանքի փորձությունը, առանձին վերցրած, աշխարհի քաշած տառապանքի ամբողջությունն է կազմում, որովհետեւ այն արհավիրքը, որ այլ ազգեր ճաշակել են առանձին-առանձին, հայ ժողովուրդը տեսել է համատեղ: Չափազանցություն չի լինի, եթե ասելու լինենք, որ հայ ժողովուրդը իր պոեզիայով ողջ մարդկության բերանով գայլույթի կոչ է արել բռնության դեմ եւ գերության ճիրաններում պայքարել է գերության դեմ:

57. Հայ բանաստեղծությունը մարդկության մնայուն երգն է, պատմության դաժանությունների դեմ եւ ազգերին ու ժողովուրդներին միմյանց միացնելու խորհրդանշանը: Հայրենի երկրից անջատվածությունը եւ այն զրկանքները, որ պատմության ընթացքում ճաշակել է հայ ժողովուրդը, մի տեսակ թախծոտ երանգ են հաղորդել նրա քնարերգությանը:

Պարսկական մամուլից
/ 37 ԳՍԱ "Պատմաբանասիրական հանդես", Երեւան, 1988, թիվ 2, էջ 150/

58. Հայաստանում ձեռքը մեկնես՝ կհասնես հազարամյակների հնության: Այստեղ դուք կարող եք մատնեքով շոշոփել ուրարտական թագավորների սեպագիր արձանագրությունները, ընկույզ քարով տասնհազարամյա քարի կացնով: Հայաստանը պատմության հետ "դու" - ով է խոսում:

59. Հայոց հողում կատարվում է ներկայի եւ անցյալի անընդհատ փոխանակում: Կան ալիքներ, որոնք շրջանցում են հանդիպած առարկաները, կան ալիքներ, որոնք թափանցում են այդ առարկաների միջոցով: Բայց ահա սրանք հայկական ալիքները, որոնք շարժակալում են ժամանակներն ու սերունդները, կարծես գործում են ընտրության սկզբունքով: Նրանք հայերի միջոցով թափանցում են, դիպչում նրանց բոլոր լարերով՝ հասցնելով նրանց ամեն տեսակ տեղեկություններ հայտնել անցյալի, ներկայի եւ ապագայի մասին...

60. Եթե ինձ հարցնե՞րի՝ ի՞նչն է ամենաբնորոշը հայկական դեմքի համար, ես, հավանաբար, կասեի կնճիռները: Փառահեղ, առյուծի կնճիռներ: Նայելով հայի դեմքին, ես տեսնում եմ ոչ միայն իր անձնական, մասնավոր կնճիռները, այլև ժողովրդի, պատմության կնճիռները: Այդ կնճիռները ավելի շատ ժողովրդի հնության մասին են խոսում, քան մարդու ծերության:

61. Առաջ ես կարծում էի, թե հարավի բնակիչները բոլորն էլ խոլերիկներ են: Բայց հայերն ինձ զարմացրին նրանով, որ ինչպես պարզվեց, խոսքերի ու շարժումների մեջ հիմնականում արտակարգ ժխտ մարդիկ են: Երեւում է, այս հարցում եւս նրանց առաջնորդում է այն սկզբունքը, որ նրանց ստիպում, օրինակ, ծայրաստիճան ռաջիոնալ, լակոնիկ կառուցել իրենց տածարները:

2 գիտեմ, թե հայկական բնավորությունը իր սթափ խելքով ու ինքնաբնատատական ծալքերով, իր հեզմական երանգով ու ճկունությամբ, որբանով է համապատասխանել անցած դարերին, բայց ակնհայտորեն տեսնում եմ, թե նա որքան գեղեցիկ ու համաչափ է ներգործվում մեր դարի բնավորությանը:

62. Միմիտոֆագոտրոնների բետոնե պատերը են արձճե դռները ոչ մի կերպ չեն կարող պատկերացում տալ կատաղած մատերիայի տիեզերական, մոլեգին արագությունների մասին:

Խոշոր քարերից կերտված, իր նիրվանայի մեջ ընկղմված հայր՝ նույն գեներատորն է, միայն՝ մարդկային կատարումով:

63. Խաչքար...

Խաչքարը զուտ հայկական երեւույթ է: Նրա մեջ առկա են հայկական գլխավոր գծերը: Թերեւս հենց խաչքարից սկսվեց մի ծանոթությունը՝ հայ ճարտարապետության, իսկ գուցե եւ հայկականի հետ՝ աշխասարակ:

Խաչը միշտ եղել է մահվան խորհրդանշան: Խաչ քաշել որեւէ բանի վրա, քառատել... Խաչի բուն ձեւը ծայրաստիճան ասկետական է, կյանքի նշաններից զուրկ:

Իսկ հայոց խաչքարը կենաց ծառի է նման: Նրա թելերից, ինչպես ճյուղերից, կախված են նուռ ու խաղողի ճիթեր, իսկ ծողը, ծառաբնի պես, աստիճանաբար ու աննկատ վերածվում է արմատների: Խաչի բուն զարդաբանդակ է, որը կյանք է տալիս մեռյալ խաչի կյանքի վերածված մահ: Կենդանի կնճիռներ ստացած քար: Խաչքարի հիմնական կնճիռները հենց իր խաչի գծերն են, իսկ ավելի մանր կնճիռները զարդաբանդակի գծերն են:

Եվ հիմա, որ հային էլ ես հիշում, առաջին հայացքից խիստ, նույնիսկ չոր մարդ է թվում, բայց հենց որ ավելի խոր են նայում, կյանքի դրվագավոր հյուսագրի են տեսնում նրա դեմքին... Արտակարգ խստություն հիմնական գծերում եւ անբեռնակալի փոքորիկ մանրամասների մեջ: Ծայրաստիճան հակիրճ լուծում ինչպես գեղարվեստական, այնպես էլ ինժեներական: Քար զարդաբանդակի տրոփուն երակներով...

Այդ, որտեղ ասես, որ բնագավառում ասես, որ չեն հանդիպում հայոց հանճարի խորքային գծերը: Խաչքարի խստաշունչ ուղղանկյունիներ, կիկլոպային պատեր, ինձ ձեռագրերի կայուն մագաղաթ եւ նրանց վրայով արյունատար անոթների նման, բարբախուն երակների նման տարածվող զարդաբանդակներ:

65. ... Հայոց տառերը սեյագրերի օրինական ժառանգներն են: Ինչ խոսք, նրանք ծայրերից են իջել, դրոշմվել մագաղաթին կտրուկ, համառ, սասունական: Տարիների ընթացքում փոքր-ինչ կլորացել են, հարթվել: Բայց դա ընդհանուր կանոն է եւ՝ քարերն են հարթվում, եւ՝ մարդիկ:

Քարածին տառերն ու քարերից շարված խոսքերն են ստեղծել այն լեզուն, որի մեջ, ինչպես բերդի, մտել է Հայաստանը եւ փրկվել անենասարսափելի տարիներին: Հայերը թշնամիներից ոչ միայն թաքցրել են գրքերը, այլև իրենք էլ թաքցնել են գրքերի մեջ: Այդպես է ոգին մնացել տառի մեջ: Այդպես է տառը պահպանել ոգին:

Երեւույթի տության մեջ խոր թափանցունը, տրամաբանության երկաթ ուժը, հակիրճությունը՝ հայոց հանճարի այս հիմնական գծերը միատեսակ են արտացոլվել եւ՝ ժողովրդի բնավորության, եւ՝ ճարտարապետության, եւ՝ այրուբեցի, եւ՝ լեզվի մեջ:

Մխիթար Գոշ
(12-դ.)

21. Անհնազանդ Չին
Հոխորտալով ձին չուգեց հնազանդվել հեծյալին: Եւ դաշտերում շրջելիս հանդիպեց առյուծի, փախչելով նրանից, հանդիպեց արջի, պրծնելով նրանից՝ գայլի ու սրանց նմանների: Եւ հնազանդվելով խոնարհաբար վերադառնում է՝ ոչ թե դարձնելով խոնարհաբար ազատվելու նպատակով:

22. Գոմեշը՝ երկրաչափ
Գոմեշը կանեցավ երկրաչափություն սովորել: Եւ ծանծրացավ դաշտերը չափելուց, գնալով ընկավ մի ճահիճի մեջ: Իբրեւ անընդունակ նա մեղադրվեց ուսուցչից, որին ասաց.

-Մի՞թե միայն երկիր չափել է հարկավոր, կը լինեն ես քրաչափ:

23. Գոմեշն Ու իր Խնամողը
Գոմեշը կանեցավ հարվածել իր խնամողին, բայց չկարողացավ, ուստի եւ տրտնջաց աստծու դեմ, թե.

-Իմ եղջյուրները ուղիղ չես ստեղծել, այլ կորածնե:

Եւ խնամողը պատասխանելով ասաց.

-Աստված գիտեր քո չար կամքը եւ դրա համար որոշեց որ քեզ այդպիսի եղջյուրներ բուսնեն:

24. Գայլը, Այծյանն Ու Առյուծը

Գայլն սպասում էր, որ այժամը մեծ, որպեսզի ինքը բռնի նրան: Կռահելով նրա մտադրությունը, այժամը չքնեց շատ օրեր, բայց հոգնելով նիրհեց գայլը:

25. Ջայլամն ու ծիտը

Ծիտը տեսնելով, որ ջայլամը մեծ-մեծ ձվեր է ածում, գայթակղվեց եւ ուսանելու նպատակով հարցրեց գաղտնիքը:

Ջայլամն ասաց. -Կրակ եմ ուտում եւ այդ պատճառով էլ խոշոր ձվեր եմ ածում:

Կարծելով թէ ճիշտ է ասածը, ծիտը կրակ կերավ ու մեռավ: Չմտածեց, որ ոչ թե դա է պատճառը, այլ հասակի մեծությունը:

Առակն հանդիմանում է ունայն ցանկությունները, որ փոքրերը, տեսնելով հզորների գործը, իրենց եւս ցանկանում են գործել, չմտածելով իրենց տկարության մասին:

ՀԱՅՎԱԿԱՆ ԱՌԱՅՆԵՐ

- Արտը խախտուտ, մահաճա կարկուտ:
- Բանն ո՞վ անի,- ես ու դու,- ես ու դու:
- Բամբաստողը ընկույզի տուարակ է, ինչքան շարժես ծայր կհանի:
- Բարդին էլ է շատ երկար, բայց ի՞նչ անես որ բար չունի:
- Բարեկամ կորցնելը հեշտ է, գտնելը դժվար:
- Բարին որ չլիներ, չարն աշխարհը կքանդեր:
- Բաց ամանը շունն էլ կլիզի, կատուն էլ:
- Բաց բերանը ճանձ կմտնի:
- Բերան կա հաց չկա, հաց կա բերան չկա:
- Բերնե-բերան, հագար բերան, ասեղը կդառնա գերան:

ՊԱՐՍԿԱԿԱՆ ԱՌԱՅՆԵՐ

- Էշ մի մեռիր գարուն կգա, խոտ ու վարունգ կլինի:
- Էշը պոզեր էր ուզում, ակնջներն էլ կորցրեց:
- Էշի մահը շների համար հարսանիք է:
- Էշին հարսանիք են կանչում՝ ջուր կրելու համար:
- Էշից էլ եմ ազատվել, էշ պահելու հոգսից էլ:
- Էշն էն էշն է, փայլանն է փոխել:
- Էշն ի՞նչ գիտե, շաքարն ինչ արժե:
- Էշն ինչքան էլ Քրիստոսին երուսաղեմ տանի, էլի մույն էշը կմնա:
- Թացն էլ չորի հետ այրվում է:
- Թեք պահիր, բայց մի՛ թափիր:

Ժամանց

1- Ուրախ անկյուն

ՄԷ ԲՈՒԼԿԻՄ...
Հայրը դպրոցից տուն վերադարձած Վարդանիկին հարցրեց.

- Էսօր ի՞նչ ստացար:
- Մէ բուկլիմ, մեկ էլ բաժակըմ կաթ,- պատասխանեց Վարդանիկը:

ՀԻՇԵՅՐԵՅ ԽՈՍՏՈՒԲԸ

Վարդանիկը դիմում է հորը.
- Պա խոստացար, որ, եթե ինձ ստանամ, հինգ մանեք կուտաս:

- Ծո, անանոթ, մեկ ես ստացել:
- Դու էլ մանեքըմ տուր:

ԲՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԻՆ

- Վարդանիկ, կարող ես ասել, խնձորը ե՞րբ կարելի է քաղել ծառից:
- Երբ շունը տեղում չէ, իսկ պահակը քնած է, - պատասխանում է Վարդանիկը:

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԺԱՄԻՆ

Ուսուցիչը դիմում է աշակերտներին.
- Ո՞վ կարող է թվել արյունարբու խաների անունները:
Վարդանիկը ձեռք է բարձրացնում:

- Ասա վարդանիկ:
- Բատու խան, Չինգիզ խան, Գլխան, Վիլխան, Իմրխան...

ՉՀԱՍՑՐԵՑ

Վարդանիկը ցեխակոլով մտավ տուն:
- Մա, ցեխն ընկա:
- Ինչպե՞ս, մոր շավարո՞վ:
- Հա... չհասցրի շավարս հանել:

2- Արդեօք գիտե՞ք

Մաղադանուր, սամիթը, դաղձը մի քանի օր թարմ կը մնան նոյնիսկ ամենաշոգին, եթե նրանց պահեք պինդ փակված, միանգամայն չոր կաթսայում:

Հուն բանջարեղենը թարմ է պահպանվում, եթե նրան փաթաթեք խոնավ սրբիչով:

Եթե թարմ խաշած կաղամբին ավելացնեք մի քիչ քացախ կամ լիմոնաթթու, նա շատ փափուկ չի լինի:

Թարմ ցրտահարված բանջարեղենը, որից պետք է սոււ պատրաստել, միանգամից գցեք եռացող ջրի մեջ, առանց նախապես հալեցնելու: Այդ դեպքում նրա մեջ վիտամինները պահպանվում են:

3.ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

- 1-Անուն է միշտ սիրով հնչող, Անծայրածիր ճամփով թռչող, Կյանքը նրան է պարտական Ապրող, շնչող ամեն ինչով:
- 2-Ջուրն քնքշանքից իր հոր ու մոր Այդ ո՞վ է ծնվում ամեն օր:
- 3-Աշխարհի հետ ծնվել է, Աշխարհի հետ՝ մեծացել, Բայց երեսուն օրից դեն Մինչեւ հիմա չի անցել:
- 4-Անթեւ թռչում է, Անոտ՝ վազում, Բարկացավ թե չէ՝ Կրակ է հագում:
- 5-Ծովից ելել-գալիս է, Ցավեր չունի լալիս է:

Պատասխան. 1-Արեւ, 2-Արեւ 3-Լուսին 4-Ամպ-կայծակ 5-Ամպ-անձրեւ

Առողջապահական

ԺՂՂՎՈՐՊԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ԴԵՂԱՏՈՍՍԵՐ

Գլխի մազերը թափվելը կանխելու համար՝ չոր մաշկ ունեցողներին խորհուրդ է տրվում հետեւյալ բուժամիջոցը. գլուխը լվանալ տաք ջրով, առանց օճառի: Գլխամաշկը մեղմ մերսել եւ ապա 10-15 րոպե շփել կերակրի աղով ու նորից լվանալ:
Այս բուժամիջոցը կրկնել 6 անգամ:

Գլխամաշկի առողջացման եւ մազարմատների ամրացման համար խորհուրդ է տրվում գործածել ոսկրածուծ: Մոտ 250 գրամ տալարի ոսկրածուծը ոչ շատ ջրում լավ եփել եւ ապա քամել: Ստացված խառնուրդին ավելացնել 1 թեյի գդալ մաքուր սպիրտ: Գլուխը կռթռուկի յուղով մերսելուց հետո լվանալ ձեթօճառով: Կրկին մերսել, որից հետո պատրաստված խառնուրդն ավելացնել: Արդյունքում տաք ջրում, քամել ու փաթաթել գլխին: Այս բուժամիջոցը կրկնել 5 անգամ՝ մկատի ունենալով սրբիչի չորանալու աստիճանը: Քնելիս՝ ամբողջ գիշեր, գլուխը փաթաթել չոր ու տաք շորով: Առավոտյան կրկին մերսել գլուխը եւ մեկ ժամ հետո լվանալ:

Պատրաստել հետեւյալ խարմուրդը. 1 մաս կոնյակ, 4 մաս տխի քամած հյութ, 6 մաս կռթռուկի արմատի եփուկ: Այս խարմուրդը քսել գլխամաշկին եւ գլուխը տաք պահելու համար, սրբիչով 2 ժամ փաթաթելուց հետո, լվանալ: Բուժական այս գործողությունը կրկնել յուրաքանչյուր շաբաթ:

Կռթռուկի արմատները լցնել կաթսան, վրան ավելացնել այնքան ջուր, որ միայն ծածկի արմատները եւ ապա կաթսան դնել ջեռոցի մեջ ու եռացնել արմատները փափկելու աստիճանի: Այնուհետեւ սառեցնել, քամել եփուկը եւ դրանով ամեն օր տամկացնել գլխի մազարմատները: Այս դեղամիջոցի օգտագործումից հետո գլխաթեփը արագ ժերանում է, մազերի թափվելը դադարում, աճը արագանում:

Սկավոդ ճաղատությունը կանխելու եւ մազարմատները ամրացնելու համար խորհուրդ է տրվում օգտագործել գալյուկի պալարի եփուկը: Անհրաժեշտ է պալարը հավաքել օգոստոս-սեպտեմբեր ամիսներին, երբ այն լրիվ հասունացած է լինում: Մեկ ծաշի գդալ գալյուկի պալարը լցնել մեկ բաժակ եռացող ջրի մեջ եւ եփել 30 րոպե: Այնուհետեւ սառեցնել ու քսել գլխամաշկին: